Ա. Լ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԳՖՀ-Ի ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 60—ԱԿԱՆ ԹԹ.

Իմպերիալիստական առաջատար պետություններից մեկը՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը կարևոր դեր է խաղում ժամանակակից միջազգային հարաբերություններում և այդ պատճառով էլ չի կարելի անտեսել նրա մերձավորարևելյան քաղաքականությունը։ Վերջինիս ուսումնասիրումը կօգնի համակողմանի բացահայտել մերձավորարևելյան կոնֆլիկտի միջազգային ասպեկտը, ինչն իր հերթին կնպաստի ամբողջությամբ վերցրած ժամանակակից փուլում մերձավորարևելյան պրոբլեմի խորը հետազոտմանը։ Հենց այդ պատճառով էլ արտակարգորեն այժմեական և արևմտագերմանական իմպերիալիզմի մերձավորարևելյան քաղաքականության, 60-ական ԹԹ. նրա աշխուժացման՝ նեոգաղութարարական բնույթի ուսումնասիրումը։

Գերմանական իմպերիալիզմը դեռ կայզերական ժամանակներից Մերձավոր արևելքում վարում էր նվաճողական քաղաքականություն, XX դարասկզբին իր թալանարարական նպատակներում հասնելով անվիճելի հաջողություններ[1]։ Մերձավոր արևելքը կարևոր տեղ էր գրավում նաև նացիստական Գերմանիայի զավթողական ծրագրերում, ըստ որում արտաքին—քաղաքական մարմիններին հանձնարարվեց արաբներին ներշնչել Անգլիայի ջախջախման գործում գերմանական և արաբական շահերի ընդհանրությունը և նրանց վստահեցնել արաբական ժողովուրդների ազատագրական պայքարի նկատմամբ գերմանական անվերապահ համակրանքի հարցում։ Ֆաշիստական Գերմանիան հանդես էր գալիս «արաբական երկրների անկախության պաշտպանի» դերում[2]։

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո վերածնված արևմտագերմանական իմպերիալիզմը տարեցտարի աշխուժացրեց իր գրոհը դեպի արաբական երկրներ։ Արդեն 50-ական ԹԹ. սկզբին, թաքնվելով «Հակագաղութարարականության», «գործակցության», «զարգացմանը նպաստելու», «արաբների հետ ավանդական բարեկամության» ստապա-

տիր լոզունգների ետևում, ԳՖՀ-ի կառավարող շրջանները մերձավորարևելյան երկրաշրջանում ծավալեցին տնտեսական, քաղաքական և զաղափարական լայն ներթափանցում, որը նրանք բացատրում էին «ոչ միայն արևմտագերմանական մոնոպոլիաների տնտեսական պահանջմունքներից, այլև սոցիալիստական համաշխարհային սիստեմի դեմ պայքարից» բխող Արևմտյան Գերմանիայի «անմիջական շահերով»[3]։

ԳՖՀ-ի մերձավորարևելյան քաղաքականությունում հատուկ տեղ էին գրավում և ներկայումս էլ գրավում են Իսրայելի հետ փոխհարաբերությունները, որոնց հիմքը 50-ական թթ. դրեցին ԳՖՀ-ի կանցլեր Կ. Ադենաուերը և Իսրայելի վարչապետ Դ. Բեն-Գուրիոնը։ Համաշխարհային երկրորդ պատերազմում պարտություն կրած գերմանական իմպերիալիզմը, Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետության ստեղծումից հետո՝ ի դեմս ԱՄՆ-ի ռազմաարդյունաբերական կոմպլեքսի հովանավոր ձեռք բերելով, սկսեց վերածնել իր տնտեսական հզորությունը։ Եվ որպեսզի մեղմացնի համաշխարհային երկրորդ պատերազմի տպավորությունը, որը որոշ չափով խանգարում էր ԳՖՀ-ի միջազգային վարկի բարձրացմանը, ադենաուերյան Գերմանիան հայտարարեց, որ մտադիր է՝ ի հատուցումն հրեաների նկատմամբ նացիստական հանցագործությունների, դրամական վճարում կատարել Իսրայելին։ Ջանալով բոլոր միջոցներով թեկուզ փոքր ինչ մեղմել հոլոկաուստի՝ հրեական կոտորածների ծանր հուշը և նացիստական անցյալի հանդեպ իրեն թեկուզ մի քիչ գունազարդել համաշխարհային հասարակական կարծիքի առջև, ԳՖՀ-ն Իսրայելի տնտեսությունն ամրապնդելու և ռազմական հզորությունն ուժեղացնելու համար նրա ֆինանսական խոշոր օգնություն ցույց տալու հիմնական նպատակն էր հետապնդում։

1952 թ. սեպտեմբերի 10-ին Լյուքսեմբուրգում ԳՖՀ-ի և Իսրայելի միջև ստորագրված պայմանագրով զոհված 6 միլիոն հրեաների համար «գին նշանակվեց» 3, 45 միլիարդ արևմտագերմանական մարկ, և, բացի դրանից, սահմանվեց մասնավոր անձանց (միայն Իսրայելում բնակվողների) համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին գերմանացիներից կրած վնասների հատուցման դրամաչափը։ ԱՄՆ-ի կառավարող շրջանները շահագրգռված էին, որ ԳՖՀ-ն ֆինանսական օգնություն ընձեռի Իսրայելին, քանի որ Միացյալ նահանգներն այդ տարիներին ջանում էին ձևացնել, որ անմասնակից են Իսրայելի ագրեսիվ քաղաքականությանը և ցանկանում էին խուսափել Իսրայելին ռազմատնտեսական օգնություն տրամադրելուց։ Եվ թեկուզ Իսրայելին որպես ռազմատուգանք հատուցվող ֆինանսական այդքան խոշոր օժանդակության հե-

տևանքը լինելու էր ԳՖՀ-ի բյուջեի դրության վատացումն ու արաբական աշխարհի հետ հարաբերությունների սրումը, Բոնnի կառավարող շրջանները պատրաստականությամբ վավերացրեցին Լյուքսեմբուրգի պայմանագիրը, քանի որ հավատացած էին, որ դրանով իրենց ռևանշիստական արտաքին քաղաքականության հարցում ձեռք կբերեն միջազգային սիոնիզմի աջակցությունը։

Լյուքսեմբուրգի պայմանագրով Իսրայելը արևմտագերմանական մոնոպոլիաների առաջ բացեց իսրայելական շուկայի դռները։ «Մերձավոր արևելքի ոչ մի այլ երկրում հնարավոր չէ այնքան խնայողաբար և հաջողության այդպիսի հավանականությամբ կապիտալի ներդրում կատարել, որքան՝ Իսրայելում»[4], հետագայում գրում էր «Դի Վելտը»։ Եվ արդեն 1957 թ., այլ խոսքով՝ պայմանագրի կնքումից հինգ տարի անց, «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայտունգը» հաղթականորեն հաստատում էր. «Ռազմատուգանքների վերաբերյալ համաձայնագիրը Իսրայելի տնտեսությունը երկար ժամանակով կախյալ է դարձնում գերմանական արդյունաբերությունից»[5]։

Իսրայելի կոմկուսի XIV համագումարում ԳՖՀ-ի քաղաքականությունը բնութագրվեց հետևյալ կերպ. «Տնտեսական տեսակետից նրանք կարողացան Իսրայելը վերածել արևմտագերմանական ապրանքների կարևոր շուկայի և արևմտագերմանական մոնոպոլիաների կապիտալների ներդրումների կարևոր ոլորտի, նաև Միջին արևելքում գերմանական իմպերիալիզմի հետագա ծավալապաշտության համար ցատկահարթակի։ Ինչ վերաբերում է հարցի քաղաքական կողմին, ապա նրանք կարողացան Բեն-Գուրիոնի կառավարության միջոցով ապահովել իրենց նեոնացիստական վարչակարգի բարոյական արդարացումը»[6]։

1956 թ. ապրիլին Ստամբուլում կայացավ Մերձավոր արևելքի երկրներում ԳՖՀ-ի դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների կոնֆերանսը։ Ընդունված ծրագրում, որը ենթադրվում էր իրականացնել Արևմուտքի մերձավորարևելյան քաղաքականության շրջանակներում, նախատեսված էր. 1) օգտագործել այդ շրջանում արևմտագերմանական տնտեսության ընձեռած հնարավորությունները, 2) մշակույթի բնագավառում վարել «Գերմանիայի նկատմամբ արաբ ժողովուրդների համակրանքը» հաշվի առնող քաղաքականություն, 3) պաշտպանել Արևմտյան Գերմանիայի ռազմական շահերը Մերձավոր արևելքում, 4) հակազդել արաբական երկրների կողմից ԳԴՀ-ի ճանաչմանը[7]։

Մերձավոր արևելքում ԳՖՀ-ի քաղաքականության երկակի բնույթը, քաղաքականություն, որը մի կողմից նախատեսում էր ՆԱՏՕ-ի երկրների

համատեղ գործողություններ՝ Արևմուտքի մերձավորարևելյան ընդհանուր քաղաքականության շրջանակներում ու մյուս կողմից հետապնդում էր վերջին հաշվով մերձավորարևելյան շուկայից իր դաշնակիցներին դուրս մղելու նպատակամղված քաղաքական-տնտեսական սեփական նպատակներ, առանձնապես հստակորեն ի հայտ եկավ 1956 թ. Սուեզի հարցում։ Ցա.Ցա. Էտինգերը գրել է. «Սուեզի հարցում Բոննի քաղաքականությունը հստակորեն ցուցադրեց Արաբական արևելքում արևմտագերմանական քաղաքականության մեջ երկու միտումների ներքին պայքարը. մի կողմից՝ գաղութային տերությունների թուլացումը արևմտագերմանական մոնոպոլիստների շահերին ծառայեցնելու ձգտումը, իսկ մյուս կողմից՝ այդ նույն տերությունների հետ համագործակցելու հարցում ԳՖՀ-ի ՆԱՏՕ-ին անդամակցությունից բխող անհրաժեշտությունը։ Սոցիալիստական ճամբարի հանդեպ սարսափը և ազգային-ազատագրական շարժման հետագա զարգացումից երկյուղը նույնպես նպաստեցին այն բանին, որ հակառակ «հատուկ նկատառումների», Սուեզի հարցում վերջին հաշվով հաղթանակեց իմպերիալիստական մյուս երկրների հետ գործողությունների միասնության տենդենցը»[8]։

Սուեզի տագնապից հետո, երբ արաբական երկրներում անգլո—ֆրանսիական ազդեցությունը խիստ թուլացավ, զգալիորեն աշխուժացավ ԳՖՀ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը, որը վարվում էր «արևմտյան աշխարհի դիրքերը փրկելու» և ՍՍՀՄ-ի հետ արաբական երկրների կապերի ամրապնդմանը հակազդելու դրոշի ներքո։ Եվ, սակայն, եթե 50-ական թթ. վերջին ու 60-ական թթ. սկզբին արաբական երկրների հետ ԳՖՀ-ի հարաբերությունները հաջողությամբ էին զարգանում և տարփողվում էին, ապա այդ նույն ժամանակաշրջանում Իսրայելի հետ փոխհարաբերությունների մասին պատմաբաններն ու հասարակությունը կմացան ավելի ուշ, քանի որ արևմտագերմանական-իսրայելական բոլոր բանակցությունները հիմնականում գաղտնի բնույթ էին կրում։ Տակավին 1957 թ. դեկտեմբերին Իսրայելի մի խումբ ներկայացուցիչներ (Շ. Պերես, Ա. Բեն-Նաթան, Լասկով) հանդիպում ունեցան Ֆ-Յ. Շտրաուսի հետ և հայտնեցին, որ Իսրայելը կարիք ունի ոչ թե փողի, այլ գործնական օգնության. այլ խոսքով՝ զենքի։ «Շտրաուսն ինձ անմիջապես հասկացավ և պատասխանեց համաձայնությամբ»,—ավելի ուշ հիշելու էր Շ. Պերեսը[9]։ Իսրայելական լրագրողուհի Ինգա Դոյչքրոնի վկայությամբ, ԳՖՀ-ի այդ ժամանակվա պաշտպանության մինիստր Շտրաուսի համար Իսրայելը արևմտյան աշխարհի մի մասն էր, որի անվտանգության պաշտպանության համար հարկ է անել ամեն ինչ, «քանի

որ դա ԳՖՀ-ի շահերից է բխում»[10]։ Արդեն 1959 թ. Շտրաուսի նախաձեռնությամբ սկսվեցին Իսրայելին զենքի գաղտնի առաքումները, որոնք հավանության արժանացան 1960 թ. մարտի 14-ին Նյու-Յորքի «Վիլդորֆ Աստորիա» հյուրանոցում ԳՖՀ-ի կանցլեր Կ. Ադենաուերի և Իսրայելի վարչապետ Դ. Բեն-Գուրիոնի հանդիպման ժամանակ։ Այդ հանդիպման ընթացքում որոշվեց, որ ԳՖՀ-ն Իսրայելին կառաքի 240 միլիոն արևմտագերմանական մարկ արժողությամբ զենք ու միաժամանակ կստանձնի իսրայելական սպաների ուսուցումը։ Համաշխարհային հասարակական կարծիքը չվրդովելու և Արևմտյան Գերմանիայի նկատմամբ արաբական երկրների դիրքորոշումը չխստացնելու նպատակով զենքի առաքումները գաղտնի պետք է պահվեին։ ԳՖՀ-ի արտգործմինիստրության հրապարակած փաստաթղթերի ժողովածուի առաջաբանում այդ քայլը բացատրվում է համաշխարհային հասարակայնության կողմից Բոննի վրա իբր ի գործ դրված ուժեղ ճնշմամբ, իբր սոցիալիստական երկրների կողմից ԱՄՀ-ին զենքի մատակարարումների հետևանքով Մերձավոր արևելքում ուժերի հավասարակշռությունը խախտված լինելով՝ ԳՖՀ-ի վրա «պարտականություն» էր ընկնում «նպաստել այն մարդկանց անվտանգությանը, ովքեր երկար տարիների հետապնդումներից և մահվան վտանգներից հետո Իսրայելում հայրենիք գտան»[11]։ Զենքի մատակարարումները շարունակվեցին ընդհուպ 1965 թ.։ Զենքը արտահանվում էր այլ երկրներից, որոնցից գնում էր ԳՖՀ-ն և ուրիշ դրոշի ներքո առաքվում էր Իսրայել, կամ էլ հասցեագրվում էր մի երրորդ երկրի և այնտեղից վերառաքվում Իսրայել։ Վերջինիս երկու սուզանավերով ապահովելու հարցն ավելի հեշտ լուծվեց. դրանք Իսրայելին մատակարարեց Անգլիան՝ ԳՖՀ-ի նյութական միջոցների հաշվին։ ԱՄՆ-ի զինվորական գերատեսչությունն ու պետական դեպարտամենտը, իմանալով այն մասին, որ ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ից Արևմտյան Գերմանիայի ստացած նորագույն զենքը հայտնվում է Իսրայելում, ահազանգ հնչեցրեցին, քանի որ վախեցան վատթարացնել իրենց հարաբերությունները արաբական երկրների հետ և կորցնել իրենց վարկը արաբական աշխարհում[12]։ 1964 թ. հունիսին ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջոնսոնի և ԳՖՀ-ի կանցլեր Էրհարդի հանդիպման ժամանակ այս հարցը քննարկման առարկա դարձավ։ Կանցլերը հայտարարեց, որ ԳՖՀ-ն ցանկանում է շարունակել և պիտի շարունակի օժանդակել Իսրայելին։

Մինչև 1963 թ. ԳՖՀ-ն Իսրայելին արդեն առաքել էր 150 Մ—48 տանկ։ Արաբական աշխարհում իր դիրքերն ամրապնդելու նպատակով ԱՄՆ-ը նույնատիպ տանկեր վաճառեց Հորդանանին, սակայն ավելի

բուշ, 1964 թ. իր Եվրոպա այցելության ընթացքում պաշտպանության մինիստր Մակնամարան ԳՖՀ-ի կառավարության հետ պայմանավորվեց, որ այնուհետև ԱՄՆ-ը ԳՖՀ-ի միջոցով Իսրայելին առաքվող տանկերի փոխարժեքի վճարումն ինքն է ստանձնելու։ ԳՖՀ-ից Իսրայելին զենքի ընդհանուր մատակարարումները գերազանցեցին կանխորոք պլանավորված 320 միլիոն արևմտագերմանական մարկի գումարը։ Վերջին հաշվով Իսրայելին առաքվեցին 200 ամերիկյան Մ—48 տանկ, «Կոբրա» տիպի հակատանկային ռեակտիվ հրթիռներ, «Խոշքիս SPJa» տիպի պահակային տանկեր, երկու սուզանավեր յուրաքանչյուրը 1280 տոննա ջրատարողությամբ, «Նորատլաս» փոխադրական ինքնաթիռներ, «Յագուար—55» դասի արևմտագերմանական 5 արագընթաց մակույկանավեր, «Ֆիատ—F 91» տիպի գրոհային ինքնաթիռներ[13]։ Բացի դրանից ԳՖՀ-ում զինավարժություն ստացան շուրջ հինգ հազար իսրայելական զինվորներ և սպաներ։

1964 թ. վերջին դեպի Իսրայել զենքի գաղտնի առաքումները հայտնի դարձան համաշխարհային հասարակայնությանը։ Արևմտագերմանական մերձավորարևելյան քաղաքականությունը թևակոխեց տագնապալի մի շրջան։ Արաբական երկրները դժգոհությամբ ընդունեցին հաղորդումներն այն մասին, որ Իսրայելին գաղտնորեն զենք է առաքում մի երկիր, որի կառավարությունը մշտապես հիշեցնում էր իրենց իր «ավանդական բարեկամությունը»։

1965 թ. հունվարին ԱՄՀ-ի նախագահ Նասերը ԳԴՀ-ի Պետական խորհրդի նախագահ Վ. Ուլբրիխտին հրավիրեց այցելել Եգիպտոս[14]։ Բոննում իրարանցում առաջացավ։ Կահիրեում ԳՖՀ-ի դեսպան Ֆեդերերին ցուցմունք տրվեց փորձել Ուլբրիխտի այցելությունը խափանել և կամ թեկուզ ձգձգել։ Ըստ որում ԳՍԴԿ-ի Աֆրիկյան և արաբական երկրների գծով փորձագետ Գ. Յու. Վիշնևսկին խորհուրդ տվեց արաբական երկրներին և մասնավորապես ԱՄՀ-ին սպառնալ, որ Բունդեստագը կդադարեցնի այդ երկրների «զարգացման նպաստը»։ Բոննում ենթադրում էին, որ «Հոլշտեյնի վարդապետությունը»[15] այս անգամ ևս արդյունավետ կլինի և Նասերը կվախենա զրկվել ֆինանսական այն հրամայական օժանդակությունից, որ ցուցաբերում էր ԳՖՀ-ն՝ 50 միլիոն արևմտագերմանական մարկ որպես տեխնիկական օգնություն, 230 միլիոն մարկի ֆինանսական նպաստ, 1, 1 միլիարդ մարկի տասնամյա ժամկետով ապրանքային վարկ։ ԳՖՀ-ի կառավարության մամուլի հարցերի պետական քարտուղար Ֆոն Հազեն հայտարարեց, որ Ուլբրիխտի Կահիրե այցը «դիտվում է որպես Եգիպտոսի թշնամական քայլը գեր-

մանական ժողովրդի նկատմամբ» և որ եթե այցելությունը տեղի ունենա, ապա ԳՖՀ-ն դադարեցնելու է տնտեսական ամեն մի նպաստ Եգիպտոսին[16]։ Եվ սակայն Նասերը չփոխեց իր որոշումը, ավելին՝ պահանջեց, որ ԳՖՀ-ն դադարեցնի ռազմական օժանդակությունն Իսրայելին։ Արևմտյան Գերմանիայի դեսպանությունները շտապեցին շոշափել արաբական մյուս երկրների տրամադրությունները և պարզվեց, որ մեծամասնությունը հաստատապես համաձայն է Նասերի վարքագծի հետ։ Հունվարի 9—12 Կահիրեում գումարված Արաբական երկրների լիգայի խորհրդում ընդունվեց որոշում, որում, առանց անվանապես հիշատակելու ԳՖՀ-ն մասնավորաբար ասված էր. «Արաբական երկրները լի են վճռականությամբ միասնական քաղաքականություն վարելու ցանկացած երկրի նկատմամբ, որը նոր հարաբերություններ կհաստատի Իսրայելի հետ կամ կպաշտպանի Իսրայելի ռազմական ագրեսիվ ջանքերը»[17]։ «Դեր Շպիգել» ազդեցիկ հանդեսի բնութագրմամբ, «գերմանական արտաքին քաղաքականության տասնամյա հիմնամիտքը՝ «Հոլշտեյնի վարդապետությունը» արաբական միասնականությունից խորտակվելու սպառնալիքի առաջ կանգնեց»։[18] Բոն իսկ կառավարության կազմում վեճեր սկսվեցին վճռական քայլերի կողմնակիցների (Շտրաուս, Բարցել և այլք) և ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստր, արաբական երկրների հետ հարաբերությունների խիստ սրումից ձեռնպահ մնալու խորհուրդ տվող Շրյոդերի միջև։ Արևմտագերմանական կառավարությունը, նախատեսելով, որ անխուսափելի է լինելու ընդունել մի որոշում, որից կախված է լինելու իր մերձավորարևելյան ամբողջ քաղաքականությունը, խորհրդի համար դիմեց դաշնակիցներին։ Եվ սակայն ո՛չ Ֆրանսիան, ո՛չ Անգլիան, ոչ էլ ԱՄՆ-ը ոչինչ չձեռնարկեցին՝ արաբական աշխարհում ԳՖՀ-ի վարկին աջակցելու նպատակով։ Դաշնակիցների կրավորական դիրքը քննադատվեց ԳՖՀ-ի կառավարության անդամների մի շարք ելույթներում։ Ի պատասխան՝ Բոննում ԱՄՆ-ի և Անգլիայի դեսպանները կանցլեր Էրհարդին հայտնեցին, որ չեն կարող դիմել Կահիրեի հետ հարաբերությունների խզման, քանի որ դրանով Արևմուտքը կզրկեն Մերձավոր արևելքում ներկայությունից և ազդեցությունից։ Ֆրանսիական կառավարությունը հարեց այդ դիրքորոշմանը, մանավանդ որ նա արդեն իսկ աչքի առաջ ուներ տնտեսական այն նախագծերը, որոնք իրեն էին փոխանցվելու՝ արաբական երկրների հետ ԳՖՀ-ի հարաբերությունների խզման դեպքում։ Այդ նպատակով Կահիրե թռավ ֆրանսիական ներկայացուցչական մի պատվիրակություն, որի կազմում կային 15 արդյունաբերողներ։ Ավելին. ԳՖՀ-ի կառավարության վրա սկսեց ճնշում

քանեցնել գլխավոր դաշնակից Միացյալ նահանգները։ Քրիստոնեադեմոկրատական միության կուսակցության ՔԴՄ ֆրակցիայի Նյու Յորքում գտնվող նախագահ Բարցելը հեռախոսով հաղորդեց, որ Ֆեդերատիվ Հանրապետությունը ենթակա է Ամերիկայում իր նկատմամբ առկա վստահությունը լրջորեն կորցնելու վտանգին. Իսրայելին զենքի մատակարարումների դադարեցման հետևանքով սիոնիստական շրջանների արդեն այժմ կոնգրեսը մոբիլիզացնում են Բոննի դեմ, մեծազդեցիկ հրեա արդյունաբերողները ԳՖՀ-ի ֆիրմաներին ջնջում են իրենց գործընկերների ցուցակից, Բնայ Բրիտ և Պատերազմի վետերանների կազմակերպությունները սկսում են կազմակերպել արևմտագերմանական բոլոր ապրանքների շրջափակումը, արդեն իսկ ծրագրվում են հակագերմանական ցույցեր[19]։ 1965 թ. մարտի 5-ին Ռայներս Բարցելը ԱՄՆ-ից վերադարձավ և կանցլեր Էրհարդին հայտարարելով, որ «Ֆեդերատիվ Հանրապետությունը կորցնում է իր վարկն ու պատիվը», պահանջեց, որ ԳՖՀ-ն անպայմանորեն Իսրայելին առաջարկի դիվանագիտական հարաբերություններ հաստատել։ Եթե կանցլերը դրական որոշում չընդունի, ապա Բարցելը հրավիրելու է ՔԴՄ-ի նախագահության նիստ[20]։ ՔԴՄ-ՔՍՄ ֆրակցիաների ղեկավարներ Ադենաուերը, Քրոնեն, Բարցելը և Շտրաուսը զրույց ունեցան կանցլերի հետ, համոզելով նրան, որ Իսրայելին զենքի մատակարարումների դադարեցումը անհրաժեշտ է փոխհատուցել ոչ միայն նյութական օգնությամբ, այլև դիվանագիտական բնականոն հարաբերությունների հաստատմամբ, ինչ հակազդեցություն էլ որ դա առաջացնելու լինի արաբական երկրներում։ Ավելին, Բարցելը և Շտրաուսը պահանջեցին խզել դիվանագիտական հարաբերությունները ԱՄՀ-ի հետ։ ՔԴՄ—ՔՍՄ-ի այս վերջնագիրը որոշ չափով կապված էր այն պահանջների հետ, որը ԳՖՀ-ի կառավարության հատուկ պատվիրակ, Բուդեստագի դեպուտատ (ՔԴՄ) և խոշոր արդյունաբերող Ք. Բիրրենբախի առաջ Թել-Ավիվի հանդիպման ժամանակ դրեցին Լ. Էշքոլը, Գ. Մեիրը և Շ. Պերեսը։ Նրանց պահանջներից մեկը ձևակերպված էր այսպես. «Գերմանական ապագա դեսպանը պետք է իրեն նստավայր ընտրի ոչ թե Թել-Ավիվը, ինչպես մյուս մեծ պետությունների ներկայացուցչությունների ղեկավարները, այլ՝ Երուսաղեմը»[21]։

Դրա հետ մեկտեղ ԳՖՀ-ի արտգործմինիստրությունը, վերլուծելով Մերձավոր արևելքի դրությունը, փորձեց կանխատեսել, թե ի՞նչ ընթացք կստանան իրադարձությունները Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման դեպքում։ Ենթադրվեց, որ արաբական 13

երկրները ամենայն հավանականությամբ կբաժանվեն հետևյալ երեք ճամբարների.

1. Եգիպտոսը, Իրաքը և Եմենը կխզեն դիվանագիտական հարաբերությունները Բոնnի հետ և կճանաչեն ԳԴՀ-ին։

2. Հորդանանը, Սիրիան և Ալժիրը կխզեն Բոնnի հետ հարաբերությունները, սակայն չեն դադարեցնի ԳՖՀ-ի հետ տնտեսական կապերը և չեն ճանաչի ԳԴՀ-ին։

3. Թունիսը, Լիբանանը, Մարոկկոն և Սաուդյան Արաբիան կբավարարվեն ձևական բողոքներով[22]։

Ֆեդերալ կառավարության 1965 թ. մարտի 7-ի «Մերձավոր արևելքի դրության շուրջ» հայտարարության մեջ հատկապես ասված էր, որ Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը լոկ մի քայլ է երկու երկրների միջև հարաբերությունների բնականոնացման ճանապարհին։ Արաբական երկրները պետք չէ այն դիտեն որպես իրենց դեմ ուղղված գործողություն։ Բացի դրանից, արաբական պահպանողական վարչակարգերի աջակցությունն ստանալու նպատակով Ֆեդերալ կառավարությունը հայտարարեց, որ այդ բոլորն առաջացավ «արաբական աշխարհում կոմունիստական հարաճուն ազդեցության առաջ ազատ ճանապարհ բացող» նախագահ Նասերի քաղաքականության հետևանքով[23]։

Մարտի 9-ին Իրաքի պահանջով Կահիրեում գումարված Արաբական պետությունների Լիգայի խորհրդի արտակարգ նիստը հետևյալ որոշումն ընդունեց. 1) խզել դիվանագիտական հարաբերությունները ԳՖՀ-ի հետ, եթե նա գործնականապես ճանաչի Իսրայելը, 2) խզել տնտեսական հարաբերությունները, եթե Ֆեդերատիվ հանրապետությունը շարունակի մնալ ԱՄՀ-ի նկատմամբ թշնամական իր դիրքերում, 3) գերմանական ապրանքների շրջափակում և արաբական նավթարդյունահանող երկրներից դեպի ԳՖՀ նավթի առաքման արգելք[24]։ Արաբական պետությունների լիգայի անդամների արտաքին գործերի մինիստրների նիստում արաբների միջև լուրջ տարաձայնություններ ի հայտ եկան։ Նիստի մասնակիցների մեծամասնության շրջանում միասնությունը առկա էր լոկ երկու հարցերում. դեսպաններին ետ կանչել և ԳՖՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները խզել այն դեպքում, եթե նա ճանաչի Իսրայելը։ Թունիսը, Մարոկկոն և Լիբիան համաձայն չէին Լիգայի և ա՛յս որոշման հետ։ Արևմտյան Գերմանիայի հետ տնտեսական հարաբերությունները խզելու Եգիպտոսի պահանջին հարեցին միայն Իրաքն ու Եմենը։ Այնուամենայնիվ, այդ որոշումները ծայր աստիճանի սրեցին իրադրու-

թյունը, որի հետևանքով ԳՖՀ-ն զրկվեց արաբական երկրներում իր ունեցած քաղաքական բոլոր ձեռքբերումներից[25]։

Ֆեդերալ կառավարությունը վերստին հանդես եկավ «Իսրայելի և արաբական երկրների նկատմամբ ԳՖՀ-ի հարաբերությունների շուրջ» հայտարարությամբ, որում փորձեց կանխել արաբական պետությունների այդ քայլը։ ԳՖՀ-ի կառավարությունը փորձեց համոզել, որ «խիստ շահագրգռված է արաբական բոլոր երկրների հետ բարվոք հարաբերություններով» և որ «խիստ լրջորեն է ընկալում Մերձավոր արևելքի դրության հարցում արաբների մտահոգությունը»։ Հայտարարության մեջ այնուհետև ասված է, որ Արևմտյան Գերմանիան, Իսրայելին զենքի առաքումները դադարեցնելու իր որոշմամբ, «իր ներդրումը կատարեց Մերձավոր արևելքում իրադրության լիցքաթափման, ինչը համապատասխանում էր արաբական երկրների շահերին[26]։

Իր հայտարարությանը զուգընթաց ֆեդերալ կառավարությունը դիմեց նաև մի շարք գործնական քայլերի։ Այսպես, կարճ ժամանակի ընթացքում Եգիպտոս այցելեց խոշոր արդյունաբերող, Բունդեստագի դեպուտատ (ՔԴՄ) Ռ. Վերները, որի առաջ Կահիրեում դրվեցին հետևյալ պահանջները. դադարեցնել զենքի մատակարարումները Իսրայելին, հրաժարվել կանցլեր Էրհարդի վարչապետ Էշքոլի հետ ծրագրված հանդիպումից, Իսրայելին առաքված զենքերը փոխհատուցել Եգիպտոսին նույնաքանակ առաքումներով, Եգիպտոսին երկրորդ հնգամյակի համար ընձեռել 750 միլիոն մարկի վարկ։

Եվ թեկուզ ԳՖՀ-ի կառավարության ներսում լսվեցին ձայներ, որ հարկ է այդ պահանջներն ընդունել, ավելին՝ «զարգացման օգնության» մակարդակը (ըստ որում առանց խտրականության) բարձրացնել, Եգիպտոսի պահանջները մերժվեցին[27]։

ԳՖՀ-ի դիրքորոշումը պարզաբանելու նպատակով Լիբանանի և Սիրիայի կառավարություններին այցելեց պետական քարտուղար Լարը։ Արտգործմինիստրության պետական քարտուղար Քարսթենզը հանդիպում ունեցավ Ֆեյսալ թագավորի հետ, որը կարող էր հանդես գալ ԳՖՀ-ի նկատմամբ Նասերի քաղաքականության դեմ՝ Եմենում Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի շահերի բախման թելադրանքով։ Դեպուտատ Շտոլտենբերգն այցելեց Սուդան։ Մարոկկոյի, Թունիսի և Լիբիայի մայրաքաղաքներ արտակարգ դեսպաններ չուղարկվեցին, քանի որ այդ կառավարությունները հասկացնել տվեցին, որ Բոնnի դեմ խիստ քայլերի չեն դիմելու։ Արաբական մայրաքաղաքներում բողոքի ցույցեր տեղի ունեցան Արևմտյան Գերմանիայի դեսպանատների առաջ։ Իսրայելի

Քնեսեթը (պառլամենտը) չորսժամյա նիստից հետո որոշում ընդունեց ԳՖՀ-ի հետ հաստատել դիվանագիտական կատարյալ հարաբերություններ, այն էլ՝ հակառակ համաշխարհային երկրորդ պատերազմի ամբողջ դաժանությունն ու սարսափը ապրած իսրայելական քաղաքացիների բողոքի բազմաթիվ ցույցերի։ ԳՖՀ-ի հետ դիվանագիտական կատարյալ հարաբերություններ հաստատելու Իսրայելի անսպասելիորեն արագ որոշումը Բոննին դրեց երկընտրանքի առաջ։ Չէ՞ որ հարաբերությունների հաստատման դեպքում Արևմտյան Գերմանիան կորցնում էր արաբական ընդարձակ և տարողունակ շուկան՝ արևմտագերմանական արտաքին առևտրի 5%-ը։ 1964 թ. դեպի արաբական երկրներ ԳՖՀ-ի արտածումները կազմեցին 1,5 միլիարդ մարկ, իսկ ներմուծումները (հիմնականում նավթ)՝ 2,9 միլիարդ մարկ։ Իսրայելական կառավարությունը ԳՖՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ ձգտում էր այդ ինչոր չափով բացառիկ պատեհությունից օգտվել արևմտագերմանական-արաբական հարաբերությունները խզման հանգեցնելու և դրանով իսկ Եվրոպայում արաբական երկրների ազդեցությունը թուլացնելու նպատակով։ Իսրայելի կառավարությունը ոչ մի դեպքում չէր կարող ձեռքից բաց թողնել իր վարկը բարձրացնելու հնարավորությունը՝ աշխարհին ցույց տալով, որ արաբական երկրները խոչընդոտ չեն Իսրայելի արտաքին քաղաքական առաջադրանքների լուծման գործում։ 1965 թ. մարտի 16-ին հանդես գալով Քնեսեթում, Իսրայելի վարչապետ Լ. Էշքոլը հայտարարեց, որ մի կողմից ԳՖՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը «խիստ նշանակալից հակահարված է մեր հարևանների շանտաժող ճնշումներին», որոնք ցանկանում են ուրիշ երկրներին վարակել Իսրայելի նկատմամբ «թշնամական զգացումով», մյուս կողմից ԳՖՀ-ը,— ընդգծեց Էշքոլը,— մեծ ուժ և ազդեցություն ունի Եվրոպայում և Եվրոպական տնտեսական միավորման մեջ[28]։ ԳՖՀ-ի հետ հարաբերությունների հաստատման օգտին քվեարկեցին Քնեսեթի 66 դեպուտատներ, 29-ը դեմ արտահայտվեց, իսկ 10-ը ձեռնպահ մնաց[29]։

Բնութագրական են իսրայելական պետական հասարակական մի շարք գործիչների հայտարարությունները ԳՖՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ։ Այսպես, «Շպիգել» հանդեսի հետ հարցազրույցի ժամանակ մինիստր Շ. Պերեսը հայտարարեց, որ արևմտագերմանական սահմանադրության մեջ պետք է լինի Իսրայելին վերաբերող մի հատուկ հոդված, որով ԳՖՀ-ը պետք է պարտավորվի պաշտպանել Իսրայելին. «Ես անվտանգությունը ավելի կարևոր եմ համարում, քան՝ դիվանագիտական հարաբերությունները...

Սահմանները պաշտպանվում են ոչ թե դեսպաններով, այլ զենքով,— շարունակեց նա։— Ես չէի ցանկանա տեսնել որ գերմանա-իսրայելական հարաբերությունները հիմնված են բացառապես ֆինանսական համաձայնագրերի վրա»[30]։ Իսրայելցիները ձգտում էին ձեռք բերել հնարավորին չափ մեծ քանակությամբ զենք, այլ ոչ թե դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ «բուժել գերմանացիների բարոյական տառապանքները» անցած պատերազմի հիշատակներից։ Այն հարցին, թե նա ի՞նչն է Իսրայելի համար ավելի կարևոր համարում, զե՞նքը, թե՞ դիվանագիտական հարաբերությունները, նախկին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնը անվարան պատասխանում էր. «Անկասկած՝ զենքը»։ ԳՖՀ-ը «պետք է այսուհետև էլ մեզ զենք ուղարկի»։ Ամբոխավարորեն հայտարարելով, որ գերմանացիներն ունեն բարոյական պարտք, որը և նրանց պետք է պարտավորեցնի զենք ուղարկել այն մարդկանց զավակներին, ում նացիստները հալածեցին և ովքեր ստեղծեցին իրենց օջախը՝ Իսրայելը։ Եվ թեկուզ ԳՖՀ-ի կառավարության մտքով իսկ չէր անցնում զենք ուղարկել Եգիպտոսին, Բեն-Գուրիոնն զգուշացնում էր. «Սակայն դուք բարոյական որևէ հիմք չունեք զենք ուղարկելու Նասերին»[31]։ Բրյուսելում հանդես գալով լրագրողների առջև, Հրեական համաշխարհային կոնգրեսի գործկոմի նախագահ Նաում Գոլդմանը ԳՖՀ-ին քննադատում էր Իսրայելին զենքի մատակարարումները դադարեցնելու հարցում, ԳՖՀ-ի դիրքորոշումը բնութագրելով որպես մերձավորարևելյան կոնֆլիկտի նկատմամբ արևմտագերմանական քաղաքականության մեջ «լրջագույն սխալ»։ Նա ցանկություն էր հայտնում, որ «ապագայում Բոնը ՆԱՏՕ-ի շրջանակներում հավանաբար զենք կուղարկի Իսրայելին»[32]։

Ֆեդերալ կառավարությունը վճռականորեն դեմ էր այն բանին, որ աշխարհին հայտարարի լոկ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին՝ առանց տնտեսական և ֆինանսական հարակից որևէ համաձայնագրի։ Չէ՞ որ այդ դեպքում արաբական բոլոր երկրների աչքի առաջ կհաստատվեր Իսրայելին զենքի առաքման վերաբերյալ գաղտնի պայմանագրի ոչնչացումը, քանի որ Բոնը մեծ նշանակություն էր տալիս այն բանին, որ արաբների մեջ այն տպավորությունը չստեղծվի, թե ԳՖՀ-ի և Իսրայելի միջև առկա է մի նոր գաղտնի պայմանագիր։ Քյոլնում Իսրայելի առևտրական առաքելության ղեկավար Շինարի հետ հանդիպման ժամանակ կանցլեր Էրհարդը հայտարարում էր, որ Իսրայելի հետ նոր հարաբերությունները կառուցվելու են հետևյալ ըմբռնումների վրա. առանց գաղտնի պայմանագրերի, առանց զենքի մա-

տակարարումների, առանց զարգացման նպաստի» գծով մյուս երկրների նկատմամբ Իսրայելի որևէ առանձնաշնորհման[33]։ Դա ԳՖՀ-ի վերջին փորձն էր արաբական պետությունների առաջ չքմեղանալու։

Դիվանագիտական հարաբերությունների հաստատման կապակցությամբ ԳՖՀ-ի կանցլեր Էրհարդը և Իսրայելի վարչապետ Էշքոլը նամակներ փոխանակեցին։ Էրհարդը գրում էր, որ «Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետության որդեգրած դիրքը վկայում է, որ նա հասկանում է ամբողջ աշխարհի, այդ թվում Իսրայելի հրեաների նկատմամբ գերմանացիների առանձնահատուկ վիճակը»։ Նա համոզմունք էր հայտնում, որ «մեր երկու ժողովուրդների միջև երջանիկ ապագայի հարաբերությունների ուղին հարթվելու է»[34]։

Լ. Էշքոլը իր պատասխան նամակում կիսում էր կանցլերի հույսը, որ իրենց համատեղ որոշումը նշանակալից քայլ է դեպի լավագույն ապագան[35]։

1965 թ. մայիսի 12-ին ԳՖՀ-ը և Իսրայելը դեսպանների մակարդակով դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին։ Հաջորդ օրը ֆեդերալ կառավարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որում արդեն քանիերորդ անգամ արաբներին վստահեցրեց, որ Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ուղղված չէ արաբական երկրների դեմ, «Հատկապես արաբական այն երկրների ժողովուրդների դեմ, որոնց հետ գերմանական ժողովուրդը բարեկամ է» և որ ԳՖՀ-ի և Իսրայելի միջև որևէ գաղտնի պայմանավորվածություն գոյություն չունի[36]։

1965 թ. մայիսի 12-ի երեկոյան Արևմտյան Գերմանիայի հետ դիվանագիտական հարաբերությունները առաջինը խզեց Իրաքը։ Երկու օրվա ընթացքում ԳՖՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները խզեցին ԱՄՀ-ը, Ալժիրը, Սիրիան, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Եմենը, Հորդանանը, Լիբանանը և Սուդանը։ Այսպիսով, արևմտագերմանական մերձավորարևելյան քաղաքականությունը լուրջ պարտություն կրեց։ Մերձավոր արևելքում Բոննի դիրքերը խարխլվեցին իմպերիալիստական դավադրական քաղաքականության և Իսրայելին զենքի գաղտնի մատակարարումների հետևանքով։

60—ական թթ. Իսրայելին աջակցելու Բոննի քաղաքականությունը հատկապես վտանգավոր էր այն պատճառով, որ բաղկացուցիչ մասն էր սոցիալիստական ճամբարի և արաբական երկրներում ազգային—ազատագրական, հակաիմպերիալիստական շարժման դեմ իմպերիալիստական ուժերի սառը պատերազմի։ Բոննը աջակցում էր Իսրայելի սիոնիստա-

կան կառավարության ագրեսիվ նկրտումներին, զինելով և ֆինանսավորելով նրան ու դրանով իսկ մշտական սպառնալիք ստեղծելով Մերձավոր արևելքում խաղաղության համար։ Ստրատեգիական ապրանքների առաքումները զգալիորեն ամրապնդեցին Իսրայելի տնտեսությունը. ավելին՝ դրանք նպաստեցին այն բանին, որ զենք արտադրող իսրայելական ձեռնարկությունների ավելի քան 80 %-ը կառուցվեցին ԳՖՀ-ի օժանդակությամբ[37]։ Իսրայել ուղարկվող ապրանքներն ու հումքը մտնում էին այն ապրանքների ցուցակում, որոնց սոցիալիստական երկրներ առաքման վրա էմբարգո էր դրված, քանի որ դրանք կտրականապես բնութագրվում էին որպես պատերազմի համար չափազանց կարևոր նյութեր։

Արևմտյան Գերմանիայում Իսրայելին օգնություն ցույց տալու հարցում հսկայական դեր խաղացին սիոնիստական «միլիոնատերերի ինտերնացիոնալի» հետ կապված մոնոպոլիաներն ու բանկերը[39]։ Իսրայելի գանձարկղին կամավոր մուծումներ կատարողների թվում էին «Դոյչե բանկը», «Բերլիներ բանկը», «Ֆրանքֆուրտեր բանկը», «Բայերիշե-հիպոտեկեն ունդ վեքսել բանկը», Քյոլնից «Լեոպոլդ Զելիգման» բանկային հին տունը, «Զոլոմոն Օպպենհեյմ յունգերե ունդ կոմպանին», «Ջ. Խ. Շտեյնը», «Հերթի» կոնցեռնը, «Մաննեսմանը», «Ֆ. Կրուպը» և ուրիշներ[40]։

ԳՖՀ-ը ատոմային էներգիայի բնագավառի հետազոտական աշխատանքներում համագործակցեց Իսրայելի հետ[41]։ Միայն 1960—1966 թթ. «Ֆոլքսվագեն» ֆիրման այդ նպատակով Իսրայելին տրամադրեց 25,4 միլիոն մարկ[42], իսկ Ֆեդերալ կառավարությունը՝ 81,5 միլիոն մարկ։ Ռեհովոտում (Իսրայել) Վայցմանի անվան գիտահետազոտական ինստիտուտում աշխատեցին ԳՖՀ-ից 52 ատոմագետ գիտնականներ և ավելի քան 400 մասնագետներ։ Եվ սակայն դրա հետ մեկտեղ Բոննից պաշտոնական անձնավորությունները ստապատիր կերպով հայտարարեցին, որ իրենք ընդհանուր ոչինչ չունեն ատոմային ռումբի ստեղծման իսրայելական նախագծերի հետ[43]։ Իսրայելի հետ իր «Բարեկամության կամուրջը» կառուցեց նաև Եվրոպայում «սառը պատերազմի» առաջյալներից մեկը՝ մամուլի արևմտագերմանական արքա Ակսել Շպրինգերը, որ 1966-ին Իսրայելին նվիրեց 3,6 միլիոն մարկ[44]։

1966 թ. մայիսի 11-ին ստորագրվեց Իսրայելին 160 միլիոն մարկի վարկային օժանդակություն ընձեռելու վերաբերյալ համաձայնագիրը, օգնություն, որ տարեցտարի պետք է վերանորոգվեր[45]։ Միայն 1965 թ. արևմտագերմանական կապիտալ ներդրումները 1964 թ. հետ համեմա-

տած քառապատկվեցին և նրանց հետագա աճի միտում էր առկա[46]։ 1965 թ. դեպի Իսրայել արևմտագերմանական արտածումները կազմեցին 276,4 միլիոն մարկ[47]։ Իսրայելի վարչապետ Լ. Էշքոլը, մամուլին արած հայտարարություններից մեկում, գոհունակություն հայտնելով Արևմտյան Գերմանիայի հետ հարաբերությունների վիճակից, ընդգծեց, որ ԳՖՀ-ը պետք է Իսրայելին օգնի Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ)-ի անդամ դառնալու և դրանով իսկ պետք է նպաստի Իսրայելի տնտեսական զարգացմանը[48]։ ԳՖՀ-ի նախկին վարչապետ Կ. Ադենաուերին 1966 թ. մայիսին Թել-Ավիվ հրավիրելը Իսրայելին ու նրա քաղաքականությանն աջակցելու ուղղությամբ ի գործ դրված նրա բազմամյա ճիգերի համար իսրայելական կառավարության երախտագիտության դրսևորումը հանդիսացավ[49]։

ԳՖՀ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը բնութագրելով որպես «դյուրազգաց գործընկերներից մեկին կամ երկուսին (այն է՝ արաբներին և հրեաներին—Ա. Մ.) չխրտնեցնելու նպատակով բարդ լարախաղացության արվեստ», արևմտագերմանական հետազոտող Կրայսլերը բացե ի բաց հայտարարեց, որ արտաքին քաղաքական որևէ նպատակի հասնելու համար ԳՖՀ-ը պետք է դուրս գա արաբա—իսրայելական կոնֆլիկտից, որպեսզի հակառակ դեպքում արաբներին հիմք չտա ճանաչելու ԳԴՀ-ին[50]։ Իսկ եթե պատահի, որ «գերմանական մերձավորարևելյան քաղաքականության Ստալինգրադը» տեղի ունենա, ապա պետք է «համառորեն որոնել հնարավորություններ»՝ որպեսզի ոչ միայն Իսրայելը, այլև արաբական պետությունները մնան ԳՖՀ-ի դիվանագիտական գործակիցները[52]։

Արաբական երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո ԳՖՀ-ի մամուլում ի հայտ եկան դժգոհության նշաններ այն իրողությունից, որ արևմտագերմանական արդյունաբերությունը, թեկուզև ձեռք էր բերել Իսրայելի նման բարեկամ, այնուամենայնիվ կորցրել էր այդքան ընդարձակ շուկա։ Առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչները գտնում էին, որ դիվանագետներն ու կառավարությունը սխալ են թույլ տվել՝ խզելով դիվանագիտական հարաբերությունները արաբական երկրների հետ, մի բան, որի հետևանքով դադարեցվեց դեպի զարգացող երկրներ արևմտագերմանական ապրանքների արտահանման կարևոր խթան հանդիսացող և «արտաքին-տնտեսական հարկադրանքի և գաղութների թալանման մեթոդներից զարգացող երկրներին ենթարկելու տնտեսական, քաղաքական և գաղա-

փարական հարաբերությունների սիստեմին անցում կատարած ժամանակակից նեոգաղութարարության հիմնական բաղկացուցիչ մասը կազմող «զարգացման նպաստի» գծով նախկինում ստանձնած պարտավորությունների կատարումը[53]։ Արաբական երկրների հետ Արևմտյան Գերմանիայի դիվանագիտական հարաբերությունների խզման հետևանքով ԳՖՀ-ի մոնոպոլիաները շատ բան կորցրեցին։ Ինչպես իրավամբ նշել է Մ. Ս. Օշկովը, «ճիշտն ասած հենց դրանով էլ բացատրվում են ԳՖՀ-ի կառավարության նրանց կոչերը՝ այս երկրաշրջանի երկրների նկատմամբ սկսել ավելի ողջամիտ քաղաքականություն»[54]։

Արդեն 1965 թ. նոյեմբերի 10-ին, ելույթ ունենալով Բունդեստագում, կանցլերը հայտարարեց արաբական երկրների հետ կապերը վերականգնելու իր պատրաստակամության մասին, եթե նրանք հասկացություն ցուցաբերեն այն փաստի նկատմամբ, որ Բոննի և Թել-Ավիվի միջև գոյություն ունեն բնականոն հարաբերություններ[55]։ 1966 թ. փետրվարի 25-ին մամուլի ասուլիսի ժամանակ նա նորից պատրաստակամություն հայտնեց «արաբական երկրների հետ հաստատել ավանդական հարաբերություններ», նշելով, որ «դիվանագիտական հարաբերությունների բացակայության այժմյան վիճակը գոհացուցիչ չէ»[56]։ 1966 թ. հունիսի 10-ին ԳՖՀ-ի կանցլերը, պատրաստակամություն հայտնելով վերականգնել դիվանագիտական հարաբերությունները արաբական պետությունների հետ, նշեց նաև, «քանի որ այդ հարաբերությունները խզվել են արաբական երկրների կողմից, ապա՝ պետք է հենց նրանք էլ նախաձեռնություն հանդես բերեն»[57]։

Ֆինանսական օգնություն ցույց տալու վերաբերյալ արևմտագերմանական-իսրայելական համաձայնագրի ստորագրումից հետո կառավարության ներկայացուցիչ ֆոն Հազեն արաբական երկրներին կոչ արեց «որքան կարելի է շուտ» կարգավորել խզված հարաբերությունները, վստահեցնելով նրանց, որ Իսրայելին վարկային օգնություն ցույց տալը ուղղված չէ արաբական երկրների դեմ, այլ լոկ մի մասն է կազմում զարգացող երկրներին օժանդակություն ընձեռելու ԳՖՀ-ի՝ ամբողջ աշխարհն ընդգրկող քաղաքականության։ Արաբական երկրներին ուղղված հայտարարության մեջ հույս էր հայտնվում «արաբական երկրների ողջամտության» նկատմամբ[58]։

Եվ սակայն ֆեդերալ կառավարությունը լոկ խոսքով էր դիվանագիտական հարաբերությունների վերահաստատման հարցում սպասում արաբական երկրների «նախաձեռնությունը». գործնականում նա վարում էր արաբական պետությունների հետ ոչ պաշտոնական շփումների ակ-

տիվ քաղաքականություն։ ԳՖՀ-ի արտգործմինիստրությունը սրտապընդված էր այն իրողությամբ, որ արաբական երկրները չէին իրագործել իրենց մտադրությունն ու չէին ճանաչել ԳԴՀ-ը[50]։ Բոն իսկ ԳՖՀ-ի հետ հարաբերությունները խզած արաբական երկրներում առկա էին Բոննի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու օգտին սուր միտումներ, որոնք քաջալերվում էին ԳՖՀ-ի դաշնակիցների՝ գերմանական մերձավորարևելյան քաղաքականության ձախողանքի մեջ երկրաշրջանում իմպերիալիզմի ընդհանուր դիրքերի թուլացումը տեսնող ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ Այս տեսակետից նրանց համար նախազգուշացում եղավ պրեզիդենտ Նասերի 1965 թ. նոյեմբերի 18-ի ելույթը Հելուանում. «Մեր բարեկամը նա է, ով հաշվի է նստում մեր շահերի հետ։ Իսկ նա, ով հակվում է Իսրայելի կողմը և ցանկանում է մեր վզին փաթաթել նեոգաղութարարությունը և կամ պահպանել մեր նկատմամբ նախկին՝ իմպերիալիստական քաղաքականությունը, ով «տառապում է» երկրաշրջանում սոցիալիստական կարգերի ամրապընդումից, մենք բռնի ուժով նրա վզին չենք փաթաթելու մեր բարեկամությունը»[60]։

Արաբական երկրների լիգայի Կահիրեի 46-րդ նստաշրջանի եզրափակիչ հաղորդագրության մեջ հավաստվում էր, որ Արևմուտքի երկրները, Իսրայելին զենք հայթայթելով, քաջալերում են նրա ագրեսիան[61]։ Իսկ Իրաքի պաշտպանության մինիստր Շաքիր Շուքրին հայտարարեց, որ «Իսրայելը միակ ագրեսորը չէ, քանի որ մենք թշնամի ենք համարում նրան աջակցող իմպերիալիստական բոլոր պետություններին»[62]։

Դրա հետ մեկտեղ արաբական մի շարք պահպանողական երկրներում ձայներ էին լսվում ԳՖՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների վերահաստատման անհրաժեշտության վերաբերյալ։ Այսպիսով Բոնը հույս ուներ, որ ֆինանսական մեծաքանակ օժանդակություն ընձեռելու առաջարկի օգնությամբ շուտով կվերականգնի փոխհարաբերությունները առնվազն Հորդանանի, Լիբանանի, Սաուդյան Արաբիայի և Սուդանի հետ, այն բանից հետո, երբ 1966 թ. վերջին կկազմվի ֆեդերալ նոր կառավարությունը։

1966 թ. նոյեմբերի վերջին — դեկտեմբերի սկզբին Բոննում ստեղծվեց ՔԴՄ—ՔՍՄ և ԳՍԴԿ-ի բլոկը, այսպես կոչված «մեծ կոալիցիան», որը շարունակելով արդեն իսկ ավանդական դարձած «ատլանտյան համերաշխությանը» աջակցելը և ԱՄՆ-ի հետ սերտ դաշինքը պահպանելը[63], դրա հետ մեկտեղ հռչակեց նոր քաղաքականություն՝ առաջ քաշելով ցուցադրական բնույթ կրող մի շարք փոխզիջումային ձևակերպում-

ներ։ ԳՖՀ-ի կառավարությունը ըստ էության շարունակեց ռևանշիստական կուրսը և մերժեց ճանաչել ետպատերազմյան Եվրոպայում սահմանների անխախտելիությունը, քանի որ «իշխանության լծակների մոտ կանգնած էին մնում Ադենաուերի արտաքին-քաղաքական ժառանգության հետ սերտորեն կապված ՔԴՄ-ՔՍՄ ներկայացուցիչները»[64]։

Իր առաջին իսկ կառավարական հայտարարության մեջ ԳՖՀ-ի նորընտիր կանցլեր Կուրտ-Գեորգ Կիզինգերը դիմեց ԳՖՀ-ի մերձավոր արևելյան քաղաքականության հարցին, հիմնականում հետևելով Էրհարդի նախորդ կառավարության սկզբունքներին։ Կանցլերը հայտարարեց, որ արաբական տաս պետությունների հետ «ցավոք ներկայումս դիվանագիտական հարաբերություններ չունենք»։ Սակայն նա հավատացած է, որ «ի շահ երկու կողմերի ավանդական լավ հարաբերությունները շուտով պիտի վերականգնվեն ու զարգանան»։ Կանցլերն այնուհետև ընդգծելով, որ Իսրայելի և հրեա ժողովրդի հետ հարաբերությունները բարելավվեցին դիվանագիտական հարաբերությունների հաստատման շնորհիվ, վստահեցրեց, որ ԳՖՀ-ը «այդ ճանապարհով է ընթանալու նաև այսուհետև[65]։ Արտաքին քաղաքականության շուրջ վիճաբանությունների ընթացքում նոր կառավարության փոխկանցլեր և արտաքին գործերի մինիստր Վիլլի Բրանտը (ԳՍԴԿ) ընդգծեց, որ ֆեդերալ կառավարությունը «իր կարևոր առաջադրանքներից մեկն է համարում հնարավորին չափ շուտով լավ հարաբերություններ հաստատել արաբական բոլոր պետությունների հետ»։ Ըստ որում, նշեց նա, ֆեդերալ կառավարության համար ինքնըստինքյան հասկանալի է համարվում, որ նա չի միջամտելու առանձին երկրների ներքին գործերին։ Այն, սակայն, աջակցելու է Մերձավոր արևելքում դժվարությունները կարգավորելու հարցում ՄԱԿ-ի ջանքերին[66]։

ԳՖՀ-ի նոր կառավարությունը չէր թաքցնում, որ հետամտում է Մերձավոր արևելքում իր դիրքերի վերականգնմանը։ Արևմտագերմանական հայտնի լրագրող Պետեր Մեյեր-Ռանքեն խորհուրդ էր տալիս հրաժարվել «արաբական աշխարհում Ամերիկայի ակոսով ընթանալուց»։ Դա, ինչպես և ԳՖՀ-ի արտաքին-քաղաքական «ոչ ճկուն գործիք» «Հոլշտեյնի վարդապետության» կիրառման պրակտիկան հանգեցրին այն բանին, որ արաբական երկրները երես թեքեցին Բոննից։ Նրա կարծիքով արևմտագերմանական մերձավորարևելյան նոր քաղաքականությունը պետք է հաշվի նստի նախագահ Նասերի մեծ հեղինակության ու Մերձավոր արևելքում սոցիալիստական երկրների հարաճուն ազդեցության հետ և այլևս արաբներին չպետք է դնի «ԳՖՀ կամ ԳԴՀ» երկընտրանքի

առաջ։ Մեյեր-Ռանքեն գտնում էր, որ Բոնը Մերձավոր արևելք կվերադառնա այն դեպքում, «եթե ուշադիր լինի արաբական իրողությունների նկատմամբ» և չմիջամտի ներարաբական կոնֆլիկտներին[67]։

1967 թ. փետրվարի 27-ին ԳՖՀ-ի արտգործմինիստրությունը հաղորդեց, որ Հորդանանյան թագավորական կառավարությունն ու գերմանական կառավարությունը հայտարարում են դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին, «գտնելով, որ դրանով մի քայլ են կատարում ավանդական բարեկամական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ»[68]։

Այսպիսով Հորդանանը, այդ հարցում նախաձեռնությունն իր վրա վերցնելով, առաջինը դուրս եկավ արաբական տատանվող երկրների ճակատից։ Բոնի համար Հուսեյն թագավորի այդ քայլը ինչ-որ ձևով անակնկալ էր[69]։ Թեկուզ և պարզ էր, որ այդ քայլն արվել էր ցույց տալու համար, որ Հորդանանը չի գտնվում Նասերի ճամբարում և կարող է անկախորեն կիրառել իր արտաքին քաղաքականությունը։ Փըշրելով ԳՖՀ-ի նկատմամբ արաբական միասնականության շղթան, Հորդանանը հետապնդում էր ԳՖՀ-ից վարկեր ստանալու միջոցով իր տնտեսական հարցերը բարելավելու նպատակ, հակառակ այն բանին, որ ԳՖՀ-ի կառավարության ներկայացուցիչը, անդրադառնալով Հորդանանի հետ տնտեսական ապագա կապերին, լրագրողներին հայտարարում էր, որ Հորդանանի հետ հարաբերությունների վերահաստատումը քաղաքական մի ակտ է և կապված չէ այդ երկրին տնտեսական որևէ օժանդակություն ընձեռելու հետ։ Եվ սակայն Հորդանանի, ինչպես և արաբական այլ երկրների հետ ԳՖՀ-ի տնտեսական հարաբերությունները «դասավորելու են քաղաքական հարաբերությունների վիճակին համապատասխան»[70], այլ խոսքով արաբական երկրներին հասկանալ էր տալիս, որ միայն հարաբերությունների վերականգնման դեպքում կարող են հույս դնել արևմտագերմանական տնտեսական «օգնության» վրա։ Ավելի ուշ արտգործմինիստրության պետական քարտուղար Ք. Շուտցը բացե ի բաց արաբական երկրներին հայտարարեց. «Միայն հարաբերությունների վերականգնումից հետո է ԳՖՀ-ն անպայման պատրաստ բանակցություններ սկսել օգնության վերաբերյալ»[71]։

Բոնի փորձերը, հարկադրելու արաբական մյուս երկրներին ևս հետևելու Հորդանանի օրինակին, հաջողություն չունեցան։ Այսպես, Ֆեյսալ թագավորը Մեքքայում պատասխանելով լրագրողների այն հարցին, թե Բոնի հետ հարաբերությունները վերականգնելու՞ է արդյոք, ասաց, որ «եթե արաբական երկրների մեծամասնությունը ցանկանա վերականգ-

նել դրանք, ապա Սաուդյան Արաբիան կենթարկվի մեծամասնության որոշմանը»[72]։ Նախագահ Նասերը մերժեց ԱՄՀ-ի և ԳՖՀ-ի միջև հարաբերությունների վերականգնման հնարավորությունը, հայտարարելով, որ «եթե նույնիսկ արաբական մյուս պետությունները Արևմտյան Գերմանիայի հետ վերանորոգեն հարաբերությունները, ապա ԱՄՀ-ն չի վերականգնի դրանք»[73]։ Իր արտաքին-քաղաքական տեսություններից մեկում Կահիրեի ռադիոկայանը միանգամայն արդարացիորեն արաբներին համոզում էր, որ արևմտագերմանական արտաքին քաղաքականությունը, որի հիմնական սկզբունքները թելադրված են սիոնիզմի և իմպերիալիզմի կողմից, իր բնույթը չի փոխել ԳՖՀ-ում տեղի ունեցած վերջին փոփոխություններից հետո, այլ լոկ իր արտաքինն է փոխել։ «Այն, ինչ ներկայումս ձեռնարկում է Կիզինգերը, նույնն է ինչ որ Էրհարդի և Ադենաուերի կառավարությունների գործողությունները։ Բանն այն է, ասված էր ռադիոյի մեկնաբանության մեջ, որ չեն փոխվել հիմնական սկզբունքներն ու քաղաքականության հիմքերը, այլ փոխվել են ձևն ու հարդարանքները»[74]։ ԳՖՀ-ի հետ Հորդանանի դիվանագիտական հարաբերություններ հաստատելը Եգիպտոսում բնութագրվեց որպես «Բոնnի կոնցեսիաների հետևանքով Արաբական լիգայի դավաճանություն»[75]։ Իրաքի և Լիբանանի արտաքին գործերի մինիստրների հայտարարության մեջ ասված էր, որ Բոնnի հետ «հարաբերությունների վերահաստատման որոշումը կարող է տրվել միայն Արաբական լիգայի կողմից»[67]։

Արաբական երկրների լիգայի մարտի 14—18-ը գումարված 47-րդ նստաշրջանում Հորդանանի դիրքորոշումը դատապարտվեց։ Լիգայի գլխավոր քարտուղար Հասունայի հուշագրին ի պատասխան Հորդանանը հայտարարեց, որ Բոնnի հետ խզումը տեղի ունեցավ արաբական պետությունների հետ միասնության թելադրանքով։ Եվ քանի որ «այսօր միասնություն գոյություն չունի, Հորդանանը որևէ պատճառ չի տեսնում ԳՖՀ-ի հետ խզումը պահպանելու»[77]։

Բոնnի և արաբական մի քանի մայրաքաղաքներում նրա միջնորդների մի շարք շփումներից հետո, Լիգայի գլխավոր քարտուղար Աբդել Խալեկ Հասունան 1967 թ. ապրիլի 18—21-ը այցելություն կատարեց Բոնn, որտեղ զրույցներ ունեցավ Վ. Բրանդտի հետ և ընդունվեց կանցլերի կողմից։ Նրան հայտարարվեց, որ ԳՖՀ-ը «ցանկանում է ինչքան հնարավոր է շուտ լավ հարաբերություններ վերահաստատել» արաբական երկրների հետ[78]։ Հասունայի Բոնn այցելությունը հանդիսացավ արաբական պահպանողական երկրների՝ ԳՖՀ-ի հետ հարաբերությունները

բարելավելու ձգտման դրսևորումը։ Լիբանանի արտաքին գործերի մինիստր Ժ. Հաքիմը Հասունայի այցելության կապակցությամբ հայտարարեց, որ այդ մասին իմանալով՝ ներքին գոհունակություն է զգացել, իսկ ինչ վերաբերում է Լիբանանի դիրքորոշմանը, ապա մինիստրը նշեց, որ «Բոննի հետ հարաբերությունների հարցում ես շատ լավատես եմ»[79]։ Կահիրեի «ալ-Ահրամ» թերթը գրեց, որ այցելությունը անհաջողությամբ ավարտվեց, քանի որ «Վ. Բրանդտը որևէ երաշխիք չտվեց, նույնիսկ արաբական երկրների և Իսրայելի միջև կոնֆլիկտում Արևմտյան Գերմանիայի չեզոքության երաշխիքը»[80]։

Սակայն արաբական երկրներում իր դիրքերը վերականգնելու Բոննի ջանքերն ընդհատվեցին Մերձավոր արևելքում տագնապալի իրավիճակի հանգեցրած անցուդարձերի հետևանքով, իրավիճակ, որն առաջացավ Իսրայելի ագրեսիվ քաղաքականության հետևանքով։ Սկսվեց Աքաբայի տագնապը[81]։

1967 թ. մայիսի վերջերի այդ տագնապի օրերին ԳՖՀ-ը, «նեղուցների ազատության» պահանջով[82] ամբողջովին կանգնեց Իսրայելի պաշտպանության դիրքերում։ Թեկուզ և հայտարարելով տագնապում իր չեզոքություն պահպանելու վերաբերյալ, Եգիպտոսին անուղղակիորեն մեղադրելով «ագրեսիվության» մեջ, ֆեդերալ կառավարությունը որոշեց առաջացած տագնապի նկատմամբ իր վերաբերմունքը դրսևորել՝ ընդառաջելով իբր խաղաղ ազգաբնակչության պաշտպանության համար անհրաժեշտ և 1,4 միլիոն մարկ արժողությամբ 20 հազար հակագազեր ուղարկելու Իսրայելի խնդրանքին[83]։ Սակայն ֆեդերալ կառավարությունը, արաբների մոտ իր կողմից հայտարարված չեզոքության վերաբերյալ կասկածներ չհարուցելու մտահոգությամբ, ցանկաց հակագազերի հարցը գաղտնորեն լուծել։ Եվ քանի որ դա չհաջողվեց, ապա գտնվեց մի այլ ելք. հակագազերի առաքումը հայտարարվեց «քաղաքացիական ազգաբնակչությանը մարդասիրական օժանդակություն»[84]։

Արևմտագերմանական մամուլում բարձրացվեց հակաարաբական կրքոտ վայնասուն։ Այսպես, ԳՍԴԿ-ի պաշտոնաթերթ «Ֆորվերտս»-ը մայիսի 25-ին գրեց, որ «Նասերը կրակի հետ է խաղում»[85]։ Գերմանա-իսրայելական ընկերությունը ԳՖՀ-ի հասարակությանը կոչ արեց «ներկա տագնապում Իսրայելի և բնաջնջման սպառնալիքի ներքո գտնվող իսրայելական ժողովրդի նկատմամբ միասնականություն դրսևորել»[86]։

1967 թ. հունիսին անակնկալ հարձակում գործելով հարևան երկրների՝ Եգիպտոսի, Սիրիայի և Հորդանանի վրա, Իսրայելը վեց օրվա ըն-

թացքում գրավեց արաբական երկրներից զգալի հողատարածք։ Իսրայելի ագրեսիան հանդիսացավ ոչ միայն բուն իսկ Թել Ավիվի ծավալապաշտ քաղաքականության շարունակությունը, այլև՝ ինչպես իրավամբ դիտել է տվել Լ. Ի. Մեդվեդկոն, «արաբական երկրների նկատմամբ Արևմուտքի իմպերիալիստական քաղաքականության տրամաբանական շարունակությունն ու իրականացման միջոցը»[87]։

Արևմտյան Գերմանիայում արդարացրեցին Իսրայելի «կանխարգելիչ հարվածի» տակտիկան և գտան, որ Իսրայելը միայն այդ ձևով կարող էր գոյատևել թշնամական շրջապատման մեջ[88]։ Արևմտագերմանական մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ պրոպագանդվեցին Իսրայելի ռազմական հաջողությունները։ Թերթերը լույս տեսան այսպիսի վերտառություններով. «Իսրայելի մահը ազատ աշխարհի մահն է», «Իսրայելը՝ ժողովուրդների Դավիթը պետք է ապրի», «Արաբները պատերազմ հրահրեցին», «Կայծակնային պատերազմ ու կայծակնային հաղթանակ», «Իսրայելի հաղթանակը մեր հաղթանակն է» են։ Օգտվելով ԳՖՀ-ի հասարակական կարծիքի վրա իր ներգործությունից, արևմտագերմանական մամուլը իսրայելական նվաճումները ներկայացրեց որպես պայքար՝ հանուն արդար գործի[89]։

Պատերազմի սկսման օրն իսկ Արաբական երկրների Լիգայի Բոննի դրասենյակի վարիչ Կաբբանիին ԳՖՀ-ի արտգործմինիստրությունում հայտարարվեց, որ ԳՖՀ-ը, «անկախ կողմերից որևէ մեկին ընձեռվելիք մարդասիրական օգնության չափից, խիստ չեզոքություն պիտի պահպանի»։ Կաբբանին ֆեդերալ կառավարությանը կոչ արեց պահպանել իր չեզոքությունը և խնդրեց «ստրատեգիական կարևորություն ունեցող» նյութեր չառաքել Իսրայել[90]։ Սակայն, հակառակ այդ խնդրանքին, ֆեդերալ կառավարությունը Իսրայել ուղարկեց 800 բեռնատար ավտոմեքենա, որը Իսրայելը շտապ պահանջել էր ռազմական գործողությունների ընթացքում զորք և բեռներ տեղափոխելու համար։ Սակայն ԳՖՀ-ի կառավարող շրջանների ծրագրերում արաբական երկրների համար մարդասիրական որևէ օգնություն չկար։ Ընդհակառակը, նրանք փութացին հայտարարել, որ արաբների ռազմական գործողությունների հետևանքով բոլոր տեսակի օժանդակությունը դադարեցվում է։ Ինչ խոսք, որ այդ հայտարարությունը չէր վերաբերում Իսրայելին, որին օգնելու նպատակով ԳՖՀ-ում ծավալվեց նվիրատվությունների հանգանակման արշավ։

1967 թ. հունիսի 7-ին հանդես գալով Բունդեստագում և արտահայտելով խորհրդարանում ներկայացված բոլոր կուսակցությունների

կարծիքը, կանցլեր Կիզինգերը հայտարարեց արաբա-իսրայելական պատերազմի հարցում իր կառավարության «չմիջամտելու քաղաքականության» մասին[91]։ Եվ սակայն այդ հայտարարության ձևական բնույթը ընդգծվեց ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստր Վ. Բրանդտի կողմից, որը Իսրայելին վստահեցրեց, որ չմիջամտելը չի նշանակում բարոյական անտարբերություն և սրտերի սառնություն «Իսրայելի ճակատագրի նկատմամբ»[92]։ Վիճաբանությունների ընթացքում ելույթ ունեցող դեպուտատ Հ. Շմիդտը (ԳՍԴԿ), հայտնելով իր ֆրակցիայի համաձայնությունը կանցլերի ելույթին և ողջունելով նրա հայտարարությունը՝ դեմագոգիկ կերպով հաստատեց, որ պատերազմը իբր արաբների կողմից «նախապատրաստված էր սիստեմատիկ կերպով»։ Նա ընդգծեց. «Չմիջամտելը չի նշանակում, որ մենք բարոյապես կամ քաղաքականորեն անտարբեր ենք»[93]։

ԱԴԿ-ի ներկայացուցիչները, որոնք մինչ այդ գտնում էին, որ հակագազերն ու բեռնատարները պատկանում են ռազմական գույքերի թվին և ուրեմն ԳՖՀ-ը դրանց Իսրայել առաքումից պետք է լարվածության ժամանակաշրջանում ձեռնպահ մնա[94], Բունդեստագի նիստում իրենց դիրքորոշումը փոխեցին։ ԱԴԿ-ի ֆրակցիայի ներկայացուցիչ Քյուլման-Շտումմը սկզբում հայտարարեց, որ ռազմագույքի առաքումը հանդիսանում է ԳՖՀ-ի միակողմանի մասնակցությունը մերձավորարևելյան կոնֆլիկտին[95], սակայն հետագայում, վիճաբանությունների ընթացքում, այդ տեսակետը չկրկնվեց։ Ընդհակառակը Վ. Շեելը (ԱԴԿ) հանդես եկավ այն բանի դեմ, որ հակագազերի ու բեռնատարների Իսրայել առաքման իր ֆրակցիայի ընդդիմադրությունը էոպիտ կերպով խեղաթյուրվում է[96]։ Վիճաբանությունների ավարտին Միշնիքը (ԱԴԿ) ֆրակցիայի անունից ողջունեց Բունդեստագի հետևյալ միաձայն որոշումը.

1. Բունդեստագը հավանություն է տալիս Մերձավոր արևելքում չմիջամտելու քաղաքականություն վարելու ֆեդերալ կառավարության հայտարարությանը, որը հիմնվում է չեզոքության վրա։

2. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին և մեծ տերություններին, հատկապես ԱՄՆ-ին և ՍՍՀՄ-ին կոչ է անում ամեն ինչ անել, որպեսզի Մերձավոր արևելքում կայուն խաղաղություն հաստատվի[97]։

«Կոնֆլիկտին չմիջամտելու» ձևակերպումը հետևանքն էր Իսրայելի նկատմամբ ԳՖՀ-ի կառավարող շրջանների քաղաքականության։ ԳՖՀ-ում չէին ցանկանում որդեգրել չեզոք դիրք, ինչը ԳՖՀ-ին հնարավորություն չէր տա թեկուզ խոսքով պաշտպանել Իսրայելի ագրեսիան։

Բունդեստագում Վ. Բրանդտի ելույթից կարելի է հետևյալ եզրակացությանը հանգել. «կոնֆլիկտին չմիջամտելը պետք է ընկալվի սոսկ ռազմական իմաստով, իսկ ինչ վերաբերվում է քաղաքականին, ապա ԳՖՀ-ը անտարբեր չէ Իսրայելի ճակատագրի հանդեպ»[98]։ Արևմտագերմանական պատմաբան ֆոն Իմհոֆը գրեց, որ ֆեդերալ հանրապետությունը «բացարձակ ու հենց այդ պատճառով էլ անարդյունավոր չեզոքության փոխարեն որդեգրեց չմիջամտելու քաղաքականությունը, որը հնարավորություն տվեց չթաքցնել մեր համակրանքը սպառնալիքի ներքո գտնվողին»[99], այն է՝ Իսրայելին։

Զրպարտչաբար հաստատելով, որ «պատերազմը արաբների կողմից սիստեմատիկ կերպով նախապատրաստվեց» ու պայթեց «ՍՍՀՄ-ի աջակցությամբ ու ցանկությամբ»[100], ԳՖՀ-ի իմպերիալիստական շրջանները օժանդակեցին երկրում հակաարաբական և հակասովետական լայն քարոզչություն մղելուն։ Արաբա-իսրայելական կոնֆլիկտի նկատմամբ ԳՖՀ-ի այդ դիրքորոշումը պայմանավորված էր այն բանով, որ Իսրայելը, լինելով Մերձավոր արևելքում իմպերիալիզմի հենարանն ու գլխավոր ամրակետը, նախահարձակ լինելով հարևան երկրների վրա, ՍՄԿԿ Կենտկոմի 1967 թ. հունիսյան պլենումում տրված արդարացի գնահատականով՝ հետապնդում էր արաբական ազգային-ազատագրական և հակաիմպերիալիստական շարժման զարգացումը խանգարելու, «ի շահ աշխատավորների սոցիալիստական առաջադիմական վերափոխությունների ուղու վրա կանգնած» Սիրիայի և Եգիպտոսի կառավարությունները տապալելու նպատակը[101]։

Բունդեստագում բոլոր կուսակցությունների միասնական պրոիսրայելական դիրքորոշումը և ի նպաստ Իսրայելի հասարակական կարծիք ստեղծելու ուղղությամբ ինֆորմացիայի մասսայական միջոցների բազմամյա ջանքերը ապշեցուցիչ արդյունք տվեցին։ ԳՖՀ-ի ազգաբնակչության լայն շրջանները, որոնք հրեաների նկատմամբ գերմանացիների «բարոյական պարտքի» մասին ճամարտակող բուրժուական մամուլից թմրեցված էին, կանգնեցին ագրեսորի կողմում. Իսրայելի օգնության ֆոնդին նվիրատվությունները հսկայական չափերի հասան։ ԳՖՀ-ի ամենամասսայական հասարակական կազմակերպություններից մեկը՝ Արհմիությունների գերմանական միավորումը գնեց իսրայելական պետական փոխառության 3 միլիոն մարկի արժողությամբ պարտատոմսեր և կուսակցությունների, երիտասարդական միությունների և եկեղեցական կազմակերպությունների հետ համատեղ միտինգներում իր բոլոր ան-

դամներին կոչ արեց մասնակցություն բերել «Իսրայելի գոյությունը փրկելու» գործին[102]։

Կանցլերի այն հայտարարությունը, որ ֆեդերալ կառավարությունը զենք չի մատակարարելու պատերազմող կողմերին, սակայն և «մտադրություն չունի խանգարել գերմանական քաղաքացիներին, որոնք ցանկանում են մարդասիրական բնույթի պարտականություն կատարել տագնապի մատնված շրջանում»[103], բացատրում է «վեցօրյա պատերազմի» ընթացքում Իսրայելի զորքերի շարքում կռվող ԳՖՀ-ի մեծ թվով քաղաքացիների առկայության պատճառները։ Ինչպես 1967 թ. հունիսին ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում հայտարարեց Ա. Ն. Կոսիգինը, «չմիջամտելու» դիրքորոշումը չխանգարեց «ագրեսորի բանակի» համար ԳՖՀ-ի ամբողջ տարածքում բացեիբաց «կամավորների» հավաքագրմանը[104]։

1967 թ. հունիսյան պատերազմի ժամանակ մերձավորարևելյան կոնֆլիկտի նկատմամբ ԳՖՀ-ի կառավարության որդեգրած դիրքը բարձր գնահատականի արժանացավ ինչպես Իսրայելում, այնպես էլ սիոնիստական միջազգային կազմակերպությունների կողմից։ Լրագրողների հետ իր հարցազրույցներից մեկի ընթացքում վարչապետ Լ. Էշքոլը «խորը երախտագիտություն» հայտնեց Բոննին՝ Իսրայելին ընձեռված օժանդակության, նաև «Համակրանքի ու համերաշխության բազմաթիվ վկայությունների» համար։ Նա հույս հայտնեց, որ ԳՖՀ-ն հետագայում ևս կաջակցի Իսրայելին[105]։

ԳՖՀ-ի կառավարող շրջանները շարունակեցին բացահայտ պրոիսրայելական քաղաքականությունը։ Այսպես, ֆինանսավորելով Երուսաղեմի բռնագրավված մասի կառուցապատումը, Բոննի իշխանությունները ուղղակի ձեռնոց նետեցին համաշխարհային հասարակական կարծիքին և ՄԱԿ-ին, որը հանդես էր գալիս Երուսաղեմի արաբական մասի բռնակցման դեմ[106]։ Իսկ նախկին կանցլեր Լ. Էրհարդի՝ Հորդանանի գրավյալ շրջաններ այցելությունը, ինչպես նշել է Ա. Ռաշկովը, իրավամբ ամբողջ աշխարհում գնահատվեց «որպես Բոննի բացահայտ աջակցությունը իսրայելական ագրեսորներին»[107]։ Հակառակ այն բանին, որ ԳՖՀ-ի արտգործմինիստրությունը թեպետ ցուցադրաբար փորձեց համոզել նրան՝ հետաձգելու իր այցելությունը[108], այնուամենայնիվ ԳՖՀ-ը չկարողացավ այդքան արագորեն թոթափվել Իսրայելին աջակցելու դիրքորոշումից, մանավանդ որ Բոնն այցելած Շ. Պերեսը հայտարարեց, որ Իսրայելն «այժմ ամենից ավելի կարիք ունի քաղաքական, տնտեսական և բարոյական աջակցության»[109]։

Արաբական երկրների դեմ իսրայելական ագրեսիան ոգեշնչեց ԳՖՀ-ի

ռևանշիստական և միլիտարիստական շրջաններին։ «Իսրայելական փորձը» նրանց մոտ հատուկ հետաքրքրություն առաջ բերեց։ Տեղում իսրայելական բանակի մարտական փորձն ուսումնասիրելու նպատակով մեկը մյուսի ետևից Իսրայել ուղևորվեցին ԳՖՀ-ի ռազմա-քաղաքական շրջանների ներկայացուցիչների պատվիրակությունները[110]։

1967 թ. հունիսի արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ ԳՖՀ-ի կառավարության որդեգրած դիրքը արաբական երկրներում դրժգոհություն առաջ բերեց։ Ինչպես գրել է ակադեմիկոս Ե. Մ. Պրիմակովը. «Կահիրեում, անշուշտ նաև արաբական մյուս մայրաքաղաքներում, ոչ ոք չխաբվեց արևմտագերմանական ղեկավարների փարիսեցիությունից, որոնք ճամարտակում էին արաբա-իսրայելական կոնֆլիկտում իրենց չեզոքության մասին»[111]։ Սիրիան, հավատարիմ իր հակաիմպերիալիստական կուրսին, հայտարարեց Դամասկոսի արևմտագերմանական մշակութային կենտրոնի փակման մասին։ ԳՖՀ-ի հետ մշակութային կապերը խզեց նաև Իրաքը։ Բաղդադում 1967 թ. օգոստոսին տնտեսության, ֆինանսների և նավթարդյունաբերության մինիստրների խորհրդակցությունում որոշվեց նավթ չմատակարարել Իսրայելին ագրեսիայի մղող ու նրան աջակցող երկրներին՝ ԱՄՆ-ին, Անգլիային և ԳՖՀ-ին։ Եվ սակայն Խարթումի վեհաժողովը իր բանաձևում որոշեց, որ բուն իսկ նավթի արտահանումը կարող է օգտագործվել ագրեսիայի ենթարկված արաբական պետությունների տնտեսությունը ամրապնդելու և նրանց պայքարը շարունակելու հնարավորություն տալու նպատակին[112]։

Խարթումի հանդիպումից առաջ արևմտագերմանական թերթերը նշեցին, որ «գերմանա-արաբական հարաբերությունների հետագա վատթարացման վտանգն այլևս գոյություն չունի»[113], «Բոնը դուրս եկավ արաբական կրակոցների տակից»[114], «արաբներն ավելի բարեկամական են դառնում»[115]։ Իրականում էլ արաբական երկրների մեծամասնությունը չցանկացավ սրել հարաբերությունները Արևմտյան Գերմանիայի հետ, սակայն ո՛չ Սիրիան, ոչ էլ Եգիպտոսն ու Իրաքը այդպես չվարվեցին։ Բաաս կուսակցության IX արտահերթ համագումարի (1967 թ. օգոստոսի 27- սեպտեմբերի 4) որոշումներում ասված էր. «Իմպերիալիստական և սիոնիստական գրոհի պատճառը հարկ է որոնել իմպերիալիստական պետությունների, հատկապես ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և ԳՖՀ-ի՝ միջազգային սիոնիզմի հետ օրգանական միասնության մեջ» և «ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Արևմտյան Գերմանիան պատասխանատվություն են կրում ինչպես զենքի առաքման, այնպես էլ նրան

(Իսրայելին—Ա. Մ.) ագրեսիայի դրդելու և տնտեսական աջակցության համար»[116]։

Իրաքի կառավարությունը, որը նույնպես բողոքեց իսրայելական ագրեսիային աջակցող արևմտյան երկրներին մատակարարվող նավթի էմբարգոյի վերացման դեմ[117], ԳՖՀ-ի դիրքորոշման կապակցությամբ հայտարարեց, որ «Բոննի կառավարությունը, հակառակ արաբական երկրների հետ իր լայն կապերի, նպաստեց Իսրայելի զինմանը», «իսկ դրան արաբական հակազդեցությունը զրոյի հավասար եղավ, քանի որ Բոննը միայն քաղաքական հողի վրա բոյկոտի ենթարկվեց, իսկ դա նշանակում է, որ իմպերիալիստական շրջանների հետ իրենց հարաբերություններով արաբները այժմյան իրադրության մեջ վտանգ չեն ներկայացնում»[118]։

ԳՖՀ-ի նկատմամբ արաբական երկրների նմանօրինակ հակազդեցությունը չէր կարող մտահոգություն չպատճառել ֆեդերալ կառավարությանը, թեկուզև, ինչպես վերևում նշվեց, Խարթումի վեհաժողովը ԳՖՀ-ի դեմ որևէ որոշում չընդունեց։ 1967 թ. հունիսյան պատերազմից հետո էլ ավելի սրությամբ դրվեց արաբական երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների վերահաստատման հարցը, քանի որ ԳԴՀ-ը, 1967 թ. արաբա-իսրայելական պատերազմի ընթացքում Իսրայելի ագրեսիան դատապարտիչ և արաբական երկրներին աջակցություն ցույց տվող դիրք որդեգրելով[119] զգալիորեն բարձրացրել էր իր վարկը արաբական աշխարհում։ Բացի դրանից, Բոննը ամեն կերպ ջանում էր գեթ խոսքով սահմանազատվել Իսրայելի ագրեսիան պաշտպանելու քաղաքականությունից, քանի որ Թել Ավիվի հաջողությունները չէին հանգեցրել նախահարձակի արևմտյան հովանավորների ակնկալած արդյունքին՝ արաբական առաջադիմական վարչակարգերի տապալմանը և ընդհակառակը ռեգիոնում իմպերիալիստական երկրների, այդ թվում և ԳՖՀ-ի ազդեցությունը թուլացել էր։

Ագրեսիային հաջորդող ժամանակաշրջանում, հատկապես տարեվերջին, ԳՖՀ-ի պաշտոնական անձնավորությունների հայտարարությունները արդեն սկսեցին կրել «արաբների նկատմամբ բարեկամաբար տրամադրված պետության» հայտարարությունների բնույթ։ Հորդանանին պատերազմից ավերված իր տնտեսությունը վերականգնելու համար ֆինանսական և պարենային զգալի օժանդակություն ընձեռելով[120], ԳՖՀ-ը ջանաց իր վրա հրավիրել օգնության կարիք ունեցող արաբական մյուս երկրների ուշադրությունը։ ԳՖՀ-ի կառավարության կողմից Միավորված ազգերին ներկայացված հուշագրում կեղծավորաբար վստահեց-

վում էր, որ արևմտագերմանական արտաքին քաղաքականության «միակ նպատակն է Մերձավոր արևելքի ժողովուրդների հետ համագործակցել վստահության, փոխադարձ հարգանքի և արժանապատվության հիմքի վրա»[121]։

1967—1969 թթ. ԳՖՀ-ի կառավարությունը Իսրայելին տրամադրած վարկերով «անուղղակիորեն, եթե ոչ ուղղակիորեն հոգաց Իսրայելի օկուպացիոն ծախսերը»[122]։ Դրա հետ մեկտեղ ԳՖՀ-ը վարեց արաբական ակտիվ քաղաքականություն։ ԳՖՀ-ում հասարակական կարծիքի փոփոխության տեսակետից հատկանշական էր 1967 թ. դեկտեմբերին բուրժուական ազդեցիկ «Դեր Շպիգել» շաբաթաթերթի թղթակցի զրույցը իսրայելական վարչապետ Լ. Էշքոլի հետ. «Այն տպավորությունը կար, որ Իսրայելը արդարացի պատերազմ է մղում։ Սակայն ի հայտ եկավ քննադատություն, կարծիք, որ Իսրայելն իրոք կարողացավ շահել պատերազմը, սակայն խաղաղություն չհաստատեց»[123]։ Այդ ժամանակվա ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստր Վիլլի Բրանդտը իր հուշերում նշում է, որ այն բանից հետո, երբ «Իսրայելն այնքան արագ նվաճեց ռազմական հաջողություն, ի հայտ եկան նոր հոգսեր». Ճի՞շտ է որ ամեն ինչ հնարավոր է վիճելի ռեգիոնում ճանապարհները հարթելու համար, «մի՞թե շատ չեն հաշվի նստում այն բանի հետ, որ ժամանակն աշխատելու է հօգուտ Իսրայելի»[124]։ Սակայն ոչ ոքի մոտ տարակուսանք չառաջացավ այն բանի նկատմամբ, թե ԳՖՀ-ի կառավարությունը ճի՞շտ վարվեց արդյոք՝ Իսրայելին թիկունք կանգնելով։ Եվ սակայն տեսնելով, որ Իսրայելին աջակցող երկրների նկատմամբ արաբների թշնամանքն աճում է, ԳՖՀ-ը սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել՝ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու նպատակով։ Այդ ուղղությամբ առաջին միջոցառումը եղավ 1967 թ. հոկտեմբեր ամսին Բոնն այցելած Հորդանանի Հուսեյն թագավորին «Մերձավոր արևելքում գաղթականների աղետալի վիճակը թեթևացնելու համար» 50 միլիոն մարկի տրամադրումը[125]։ 1967 թ. դեկտեմբերի 5-ին ԳՖՀ-ը ճանաչեց Հարավային Եմենը և դեկտեմբերի 19-ին երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին։ 1968 թ. ԳՖՀ-ը էլ ավելի ամրապնդեց կապերը արաբական այն երկրների հետ, որոնց հետ դիվանագիտական հարաբերություններ ուներ։ Այսպես Վ. Բրանդտը այցելեց Մարոկկո և Թունիս, ԳՖՀ-ի պրեզիդենտ Գ. Լյուբկեն՝ Թունիս, ֆեդերալ մինիստր Ք. Շմյուկերը՝ Լիբիա։ Արաբական մի շարք երկրների մինիստրներ այցելեցին Բոնն։

1968 թ. փետրվարի 15-ին ԴՊԱ-ի թղթակցի հետ Վ. Բրանդտի

ԳՖՀ-ի մերձավորարևելյան քաղաքականության շուրջ ունեցած հարցազրույցը ծրագրային էր։ ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստրը հայտարարեց, որ ֆեդերալ կառավարությունը «շատ է ձգտում լավ ու բարեկամական հարաբերություններ վերահաստատել արաբական բոլոր պետությունների հետ»։ Նրա կարծիքով արաբական երկրները նորից են մեծ հետաքրքրություն ցուցաբերում ԳՖՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու նկատմամբ։ «Դիվանագիտական հարաբերությունների հարցը ներկայումս ակներևաբար արաբական երկրների կողմից ևս դիտվում է իրապաշտորեն և զգաստորեն»։ Ճիշտ է,— նշեց մինիստրը,— Մերձավոր արևելքում անցյալ տարվա պատերազմի ժամանակ այդ հարաբերությունները» ժամանակավորապես վնաս կրեցին», «սակայն ես մտածում եմ, որ արդեն մի քանի ամիս է, ինչ հեռանկարները նորից բարելավվել են»։ Բազմաթիվ հանդիպումներից մինիստրը այն տպավորությունն է ստացել, որ արաբական երկրները լուրջ պատրաստակամություն են հանդես բերում ԳՖՀ-ի հետ հարաբերությունները բնականոն դարձնելու գծով։ Բրանդտը վստահեցրեց, որ Ֆեդերալ կառավարությունը չի պատրաստվում իր տնտեսական հզորությունն օգտագործել որպես ճնշման միջոց կամ խայծ։ Եվ սակայն եթե դիվանագիտական հարաբերությունները խզված են, ապա հազիվ թե հնարավոր լինի միմյանց հետ պայմանավորվել տնտեսական օգնության շուրջ։ «Մեր օգնությունը կապված չէ որևէ պայմանի հետ, սակայն այն ենթադրում է բնականոն հարաբերությունների առկայությունը»,—ասաց Վ. Բրանդտը։ Պաշտպանելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1967 թ. նոյեմբերի 22-ի բանաձևը, որը «մերձավորարևելյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման հետագա ջանքերի համար հիմք է տալիս», ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստրը հայտարարեց. «Պատերազմի արդյունքները մեր օրերում իրավունք չեն տալիս սահմանների միակողմանի փոփոխման համար»[126]։ Այդ սկզբունքը հետագայում կանցներ Վ. Բրանդտի 70-ական թթ. արտաքին-քաղաքականության լեյտմոտիվը հանդիսացավ։ Ֆեդերալ կառավարությունը պաշտպանեց Գ. Յարինգի մերձավորարևելյան կոնֆլիկտը կարգավորելու միջնորդ առաքելությունը։ ԱՄՀ-ի հետ տնտեսական հարաբերությունները բնականոն դարձնելու նպատակով Կահիրե հրավիրվեց տնտեսական համագործակցության հարցերի մինիստր Վիշնևսկին։

Արաբական երկրների հետ առևտրում բացասական հաշվեկշիռ ունեցող ԳՖՀ-ն ջանաց ավելացնել իր արտածումները դեպի շրջանի երկրները, հատկապես դեպի նավթահանողները։ Եվ եթե 1967-ին դեպի

արաբական երկրներ արտածումները կազմեցին 423,5 միլիոն դոլլար, ապա 1969-ին՝ 573 միլիոն դոլլար։ Արտածումների ավելացումը տեղի ունեցավ Մարոկկոյի, Լիբիայի և Թունիսի հաշվին։ Իսրայելին թիկունք տալու քաղաքականությունը հանգեցրեց այն բանին, որ ԳՖՀ-ը կորցրեց մի շարք ձեռնտու պայմանագրեր արաբական այն երկրներում[128], որոնք, ինչպես Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Սիրիան են, տնտեսական հողի վրա ԳՖՀ-ին բոյկոտի չէին ենթարկում։

1968 թ. սկզբին արևմտագերմանական կառավարությունը ավելի իրապաշտորեն գնահատեց միջազգային դրությունը և հրաժարվեց «Հոլշտեյնի դոկտրինան» կիրառելու «դասական ձևերից»[129]։ 1968 թ. հունվարին «Ֆրանկֆուրտեր ռունդշաուն» գրեց. «Հոլշտեյնի դոկտրինան անպետքական է դարձել։ Դրանում ոչ մի կասկած չկա»[130]։ ԳՖՀ-ը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ռումինիայի և Հարավսլավիայի հետ, որոնք ԳԴՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ ունեին։

1969 թ. ապրիլ—հուլիսին Իրաքը, Սուդանը, Սիրիան, Հարավային Եմենի ժողովրդական հանրապետությունը և ԱՄՀ-ը հայտարարեցին ԳԴՀ-ի լրիվ ճանաչման մասին և նրա հետ դեսպանության մակարդակով դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին։ Ֆեդերալ կառավարությունը արաբական պետությունների այդ քայլը հայտարարեց «ոչ-բարեկամական ակտ»։ Օգտվելով արաբական աշխարհում բևեռացումից, ԳՖՀ-ը արաբական պահպանողական երկրներին վստահեցրեց, որ դա չի խանգարում իրեն բարեկամական հարաբերություններ հաստատել իրենց հետ[131]։ Արաբական երկրների կողմից ԳԴՀ-ին «ճանաչելու ալիքը» բացահայտեց «Հոլշտեյնի վարդապետության» փլուզումը։ Դրանում վճռական դեր խաղաց ԳՖՀ-ի դիրքորոշումը արաբա-իսրայելական կոնֆլիկտի նկատմամբ։ Բոնը ԳԴՀ-ին «ճանաչելու ալիքում» կարողացավ հաջողության հասնել միայն Եմենի արաբական հանրապետությունում[132]։ Արաբական առաջադիմական շրջանակները ԵԱՀ-ի այդ քայլը բնութագրեցին որպես դավաճանություն Իսրայելի ագրեսիայի հետևանքների վերացման համար արաբների պայքարի գործին, Իսրայելի, որին Արևմտյան Գերմանիան մեծ օգնություն է ցույց տվել ու ցույց է տալիս։ Լիբանանյան «աշ—Շաաբ» թերթի հոդվածում հստակ ասված էր, որ «ԵԱՀ-ին Բոննին ընձեռվող օժանդակությունը պիտի ցույց տրվի միայն այն պայմանով, որ ԵԱՀ-ի կառավարությունն իր վրա պարտավորություն վերցնի պայքար մղելու ՀԵԺՀ-ի դեմ և ուժեղացնի իր արշավն ընդդեմ ԵԱՀ-ի առաջադիմական տարրերի»[133]։ Դրանում

դրսևորվում է «զարգացման նպաստ» ընծայելու միջոցով զարգացող երկրների վրա նեոգաղութարարական ճնշում բանեցնելու ձևերից մեկը։

1969 թ. աշնանը ԳՖՀ-ում տեղի ունեցան Բունդեստագի հերթական ընտրությունները։ ՔԴՄ-ը պարտություն կրեց և հնարավորություն ստեղծվեց կառավարություն կազմել առանց ՔԴՄ—ՔՍՄ ներկայացուցիչների մասնակցության։ ԳՍԴԿ-ն և ԱԴԿ-ն կազմեցին կոալիցիոն կառավարություն («Փոքր կոալիցիա») և 1969 թ. հոկտեմբերի 28-ին Բունդեստագում հանդես եկան հայտարարությամբ, որում հաղորդեցին ԳՖՀ-ի արտաքին քաղաքականությունում փոփոխություններ մտցնելու մասին[134]։

ԳՖՀ-ի 60-ական թթ. մերձավորարևելյան քաղաքականությունը բնութագրելիս անհրաժեշտ է նշել, որ այն գործիք հանդիսացավ ԳՖՀ-ի մոնոպոլիստական տիրապետող շրջանների ձեռքին և օգտագործվեց ռեգիոնի երկրների ընդարձակ շուկան ավելի խորը թափանցելու նպատակով։ Հայտարարելով «իմպերիալիստական շահերի» գոյության մասին և ցույց տալով «զարգացման համար տնտեսական օգնություն», նաև վարկեր տրամադրելով արաբական երկրներին, Բոնը փորձեց ճնշում բանեցնել արաբական երկրների արտաքին և ներքին քաղաքականության վրա։ Արևմտագերմանական իմպերիալիստական շրջանների այդ տարիների մերձավորարևելյան քաղաքականությունը կարող է ենթաբաժանվել հետևյալ հանգրվանների.

1960—1965 թթ.—ԳՖՀ-ը տնտեսական և քաղաքական հարաբերություններ ունի արաբական համարյա բոլոր երկրների հետ և դրա հետ մեկտեղ գաղտնորեն մեծ քանակի զենք է ուղարկում Իսրայելին։

1965—1967 թթ.— իմանալով Իսրայելին զենքի ուղարկման մասին, արաբական երկրները վճռական բողոք են հայտնում։ Դադարեցնելով զենքի առաքումները, ԳՖՀ-ը ԱՄՆ-ի սիոնիստական շրջանների ճնշման ներքո դիվանագիտական հարաբերություններ է հաստատում Իսրայելի հետ։ Դրան ի պատասխան արաբական 10 պետություններ խզում են Բոնի հետ դիվանագիտական հարաբերությունները։ 1967 թ. հունիսին արաբա-իսրայելական պատերազմի օրերին ԳՖՀ-ը աներկմտորեն հանդես եկավ Իսրայելի կողմում՝ քաղաքականապես և բարոյապես աջակցելով ագրեսիային, թեպետ և խոսքով հայտարարվում էր կոնֆլիկտին «չմիջամտելու» քաղաքականության մասին։

1967—1969 թթ. — ԳՖՀ-ը աշխուժացրեց արաբական քաղաքականությունը՝ ռեգիոնում իր կորցրած դիրքերը վերականգնելու և արաբական երկրներին թույլ չտալու, որ դիվանագիտական հարաբերություն-

ներ հաստատեն ԳԴՀ-ի հետ։ Եվ սակայն մի շարք արաբական երկրներ (Իրաք, Սուդան, Սիրիա, ՀԺՀ և ԱՄՀ) ճանաչեցին ԳԴՀ-ին, դրանով ծանր հարված հասցնելով «Հոլշտեյնի վարդապետությանը»։

Այսպիսով, Մերձավոր արևելքում ԳՖՀ-ի նեոգաղութարարական քաղաքականությունը 60-ական թթ. կրեց լուրջ պարտություն, որը հետևանքը եղավ «Մեծ կոալիցիայի» ֆեդերալ կառավարության պրոիսրայելական կուրսի և որը կապված էր ամբողջ աշխարհում իմպերիալիզմի դիրքերի ընդհանուր թուլացման հետ։ Իշխանության գլուխ գալով, «Փոքր կոալիցիայի» նոր կառավարությունը հայտարարեց մերձավոր արևելյան կոնֆլիկտի նկատմամբ իր «հավասարակշռյալ» քաղաքականության մասին։

А. Л. МАНУЧАРЯН

БЛИЖНЕВОСТОЧНАЯ ПОЛИТИКА ФРГ В 60-е гг.

ФРГ, заявляя об отсутствии «имперских интересов», оказывая определенную «помощь развитию» и предоставляя кредиты арабским странам, пыталась оказывать давление на внешнюю и внутреннюю политику правительств арабских стран. Вместе с тем, действуя в фарватере американской ближневосточной политики, правящие круги ФРГ оказывали помощь Израилю, тайно поставляя большое количество вооружения.

Установление в мае 1965 г. дипломатических отношений ФРГ с Израилем повлекло за собой разрыв десятью арабскими странами дипломатических отношений с Бонном. В дни арабо-израильской войны в июне 1967 г. ФРГ недвусмысленно выступила на стороне Израиля, оказывая политическую и моральную поддержку агрессии Израиля, хотя формально и было заявлено о политике «невмешательства» в конфликт.

В 1967—1969 гг. ФРГ активизирует арабскую политику с целью восстановить потерянные позиции в регионе. В результате явного произраильского курса ФРГ в 60-е годы и в связи с общим ослаблением позиций империализма во всем мире неоколониалистическая политика ФРГ в указанный период потерпела серьезное поражение.

اشوت مانوتشاريان

سياسة جمهورية المانيا الا تحادية الشرق اوسطية في الستينات

حاولت جمهورية المانيا الاتحادية بعد اعلانها عن الغاء «المصالح الامبراطورية» وتقديم بعض «مساعدات التنمية» والقروض المالية للدول العربية، حاولت بذل قصارى جهودها للضغط على السياسة الخارجية الداخلية التى تمارسها حكومات البلدان العربية. وفي نفس الوقت، فان ولاوساط الحاكمة في المانيا الغربية والدائرة في فلك سياسة الولايات المتحدة الاميركية الشرق اوسطية، قدمت المزيد والمزيد من المساعدات الى اسرائيل بارسالها سريا اسلحة الدمار اللازمة.

ان اقامة العلاقات الدبلوماسية بين جمهورية المانيا الا تحادية واسرائيل في ايار (مايو) ١٩٦٥ ادت الى قطع العلاقات الدبلوماسية بين بون و عشر من الدول العربية. و في ايام العدوان الا سرائيلى سنة ١٩٦٧، وقفت المانيا الا تحادية بثبات الى جانب اسرائيل، داعمة اياها سياسيا ومعنويا، رغم اعلا نها ظاهريا سياسة «عدم التدخل» في الصراع.

هذا و نشطت سياسة المانيا الا تحادية خلال الاعوام ١٩٦٧—١٩٦٩ بغية استرجاع مواقعها المفقودة في المنطقة. و مع ذلك فشلت سياسة المانيا الاتحادية النيو كولونيأ لية فشلا ذريعا نتجة للنهج الموالي لاسرائل في الستينات و لا نهيار مواقع الامبريالية عالميا.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *А. С. Силин*, Экспансия германского империализма на Ближнем Востоке накануне первой мировой войны (1908—1914), М., 1976.

2 *Н. О. Оганесян*, Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны (1939—1945 гг), Ереван, 1980, էջ 28:

3 *Я. Я. Этингер*, Экспансия ФРГ в арабских странах и Африке, М., 1962, էջ 11:

4 „Die Welt", 17.08. 1995.

5 „Frankfurter Allgemeine Zeitung", 14.10.1957.

6 «XIV съезд Коммунистической партии Израиля», М., 1962, էջ 35:

7 *Я. Я. Этингер*, Նշվ. աշխ., էջ 90։

8 Նույն տեղում, էջ 98։

9 *Inge Deutschkron*. Israel und die Deutschen. Zwischen Ressentiment und Ratio. Verlag Wissenschaft und Politik. Köln, 1970, էջ 277.

10 „Der Spiegel", 24.02. 1965, № 9, էջ 26.

11 Die Auswärtigen Politik der Bundesrepublik Deutschland. Hrsg. von Auswärtigen Amt. Verlag Wissenschaft und Politik, Köln, 1972, էջ 84—85.

12 *U. Albrecht, B. A. Sommer*. Deutsche Waffe für die Dritte Welt: Militärhilfe und Entwicklungspolitik, Köln-Hamburg, 1972, էջ 117.

13. „Der Spiegel", 3 Februar 1965, № 6, էջ 17.

14 «الاهرام»، «القاهرة»، ١٩٦٥/١/٢٤.

15 ԳՖՀ-ի արտգործմինիստրության պետական քարտուղար, հետագային ԵՏՀ-ի հանձնաժողովի նախագահ Վալտեր Հոլշտեյնի անունը կրող «Հոլշտեյնի վարդապետության» հիմամբ ԳՖՀ-ն հանդես էր գալիս որպես գերմանական ժողովրդի միակ ներկայացուցիչ և պարտավորվում էր հարաբերությունները խզել ԳԴՀ-ին ճանաչող ամեն մի երկրի հետ։

16 Bulletin des Presse—und Informationamtes der Bundesregierung, 17.02.1965, № 29, էջ 225.

17 *Inge Deutschkron*, Նշվ. աշխ., էջ 297.

18 „Der Spiegel", 17 Februar 1965, № 8, էջ 21.

19 *Waldemar Besson*. Die Außenpolitik der Bundesrepublik. Erfahrungen und Maßtäbe. München, 1970, էջ 352.

20 Handbuch der deutshen Außenpolitik. München-Zürich, 1975, էջ 322; „Der Spiegel", 17 März 1965, № 12, 28; *Inge Deutschkron*. Նշվ. աշխ.; էջ 315. Բնայ Բրիտ՝ հրեական բուրժուա-ազգայնական հնագույն կազմակերպություն, որ հիմնադրվել է ԱՄՆ-ում, 1843 թ.։ Գործում է ավելի քան 40 երկրներում և իր շարքերում ունի 500 հազար անդամ, որից 450 հազարը՝ ԱՄՆ-ում։ Տե՛ս *С.М. Рокотов*. Сионизм—орудие агрессивных пмпериалистических кругов. М., 1983, էջ 54.

21 *Inge Deutschkron*, Նշվ. աշխ., էջ 315։

22 „Der Spiegel", 17. März 1965, № 12, էջ 28—29.

23 „Die Welt„, 8.03.1965.

24 „Archiv der Gegenwart"; 1965, էջ 11801.

25 «الاهرام»، ١٩٦٥/٣/١٥.

26 Bulletin, 17.03.1965, № 47, էջ 373.

27 „Der Spiegel", 24. März 1965, № 13, էջ 26; „Der Spiegel", 3 März 1965, № 10, էջ 23.

28 *Inge Deutschkron*. Նշվ. աշխ., էջ 327.

29 *I. Kreysler* und *K. Jungfer*. Deutsche Israel—Politik. Entwicklung oder politische Masche. Göttingen, 1965, էջ 125.

30 „Der Spiegel", 24, Februar 1965. № 9, էջ 38.

31 „Der Spiegel", 31. März 1965. № 14, էջ 34.

32 „Die Welt", 11.03.1965.

33 „Der Spiegel", 12. März 1965, № 20, էջ 25.
34 Die Auswärtigen Politik der Bundesrepublik Deutschland, էջ 546.
35 *Christoph von Imhoff*: Duell im Mittelmeer. Verlag Rombach Freiburg, 1968, Teil 2, Dokumentation, էջ 343.
36 Die Auswärtigen Politik der Bundesrepublik Deutschland, էջ 546—547.
37 *М. С. Очков.* Государственно-монополистический механизм неоколониализма (на примере ФРГ), М., 1971, էջ 16.
38 *I. Glasneck.* Das sogenannte Wiedergutmachungsabkommen mit Israel—ein Instrument des Bonner Neokolonialismus.—Konferenz „Probleme des Neokolonialismus", Bd. 1, Leipzig, 1961, էջ 722.
39 *Владимир Большаков.* Сионизм на службе антикоммунизма, М., 1972, էջ 69:
40 *Е. Евсеев.* Расизм под голубой звездой. Саратов, 1981, էջ 97:
41 *Курт Штайнгаус.* Возрождение великой державы? (пер. с нем.). М., 1981, էջ 97—98:
42 *С. Николаев.* Израиль и империалистические монополии.—«Международная жизнь», 1968, № 8, էջ 149:
43 *Ю. Устенко.* Атомные связи ФРГ.— «Мировая экономика и международные отношения», 1968, № 12, էջ 119:
44 „Der Spiegel", 30. November 1966, № 41, էջ 146; *Л. Ф. Стржижовский.* Стреляет пресса Шпрингера. М., 1978, էջ 7—8.
45 „Der Spiegel", 28. April 1966, № 16, էջ 28.
46 *Меир Вильнер.* Нынешнее положение в Израиле.—«Проблемы мира и социализма», 1967, № 4, էջ 49:
47 *Jekutiel Deligdisch.* Die Einstellung der Bundesrepublik Deutschland zum Staate Israel. Eine Zussamenfassung der Entwicklung seit 1949. Bonn-Bad Godesberg, 1974, Dok. XI, էջ 177.
48 „Der Spiegel", 28. Juli 1965. № 31, էջ 62.
49 „Der Spiegel", 9. Mai 1965, № 20, էջ 39.
50 *J. Kreysler*, նշվ. աշխ., էջ 103—104.
51 „Der Spiegel", 24. Februar 1965, № 9, էջ 33.
52 „Die Welt", 17.08.1965.
53 *Ю. М. Краснов.* ФРГ на мировых рынках. М., 1973, էջ 151:
54 *М. С. Очков.* նշվ. աշխ., էջ 18:
55 „Süddeutsche Zeitung", 10.10.1965.
56 „Frankfurter Allgemeine Zeitung", 26.02.1966.
57 „Die Welt", 11.06.1966.
58 „Die Welt", 13.05.1966.
59 „The New York Times", 27.08.1965.
60 *Г. А. Насер.* Проблемы египетской революции. Избр. речи и выступления (1952—1970). М., 1979, էջ 135:
61 ١٩٦٦/٩/١٤ ،"الاهرام".
62 ١٩٦٥/٩/٨ ،"الجمهورية" بغداد.

63 *И. С. Кремер. ФРГ:* внутриполитическая борьба и внешняя ориентация. М., 1977, էջ 228—229:

64 Федеративная Республика Германии. М., 1973, էջ 432:

65 Verhandlungen des Deutschen Bundestages. Bd. 63. Bonn, 1966, էջ 3664—3665.

66 „Frankfurter Allgemeine Zeitung", 17.12.1966.

67 *Peter Meier-Ranke.* Deutschen Nahost-Politik am Neubegin.—„Außenpolitik", Heft 4, April 1967, էջ 233—240.

68 Bulletin, 28.02.1967, № 21, էջ 172.

69 „Aussenpolitik", Heft 4, April 1967, էջ 239.

70 „Die Welt", 28.02.1967.

71 Bulletin, 4.04.1967, № 33, էջ 275.

72 „Stern", 10. April 1967, № 16, էջ 34.

73 ١٩٦٧/٣/٢٠ ،"الشعب"،

74 *Thomas W. Kramer.* Deutsch-ägyptische Beziehungen in Vergangenheit und Gegenwart. Tübingen-Basel, 1974, էջ 265.

75 „Orient", April 1967, № 2, էջ 60.

76 Նույն տեղում:

77 Նույն տեղում, էջ 95:

78 Bulletin, 27.04.1967, էջ 375.

79 „Orient", April 1967, № 2, էջ 79.

80 ١٩٦٧/٥/٤ ،"الاهرام"،

81 Եգիպտական կառավարությունը, գտնելով, որ իսրայելական և օտար նավերը Տիրանի նեղուցով և Աքաբայի ծոցով էյլաթ(Իսրայել) նավահանգիստը ստրատեգիական («ոչ—խաղաղ») բնույթի բեռներ են հասցնում, իր ռազմական նավերով փակեց նեղուցի և ծովածոցի մուտքը: Իսրայելը, այդ քայլը որպես ուղղակի պատրվակ դարձնելով, ագրեսիվ գործողությունների ձեռնարկեց: Տե՛ս Е. Дмитриев, В. Ладейкин, Путь к миру на Ближнем Востоке, М., 1974, էջ 123.

82 „Frankfurter Allgemeine Zeitung", 1.06.1967.

83 „Frankfurter Allgemeine Zeitung", 5.06.1967.

84 „Der Spiegel", 5. Juni 1967, № 24, էջ 35.

85 „Vorwärts", 25.05.1967.

86 „Die Welt", 2.06.1967.

87 *Л. И. Медведко.* К востоку и западу от Суэца. М., 1980, էջ 84:

88 „Wehrkunde". München, Heft 7/1967, էջ 338.

89 *Kennet Lewan.* Der Nahostkrieg in der westdeutschen Presse. Pahl-Rugenstein Verlag, 1970, էջ 174.

90 „Frankfurter Allgemeine Zeitung", 6.06.1967.

91 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 64, Bonn, 1967, էջ 5268.

92 Նույն տեղում, էջ 5304:

93 Նույն տեղում, էջ 5270:

94 „Frankfurter Allgemeine Zeitung", 7.06.1967.

95 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 64, էջ 5270.

96 Նույն տեղում, էջ 5280։
97 Նույն տեղում, էջ 5330։
98 Նույն տեղում, էջ 5304։
99 *Christoph von Imhoff*, նշվ. աշխ., էջ 231։
100 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 64. էջ 5270.
101 «Правда», 22.10.1967.
102 „Frankfurter Allgemeine Zeitung", 7.06.1967.
103 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 64, էջ 5268.
104 «Правда», 20.06.1967.
105 „Die Welt", 5.07.1967.
106 *С. Астахов.* Ось Бонн—Тель Авив.—«Международная жизнь», 1968, № 11, էջ 63:
107 *А. Рачков.* Ось «Бонн—Тель Авив».—«Азия и Африка сегодня», 1968 № 5, էջ 13:
108 ١٩٦٧/١٠/٣٠ ،"الاهرام"،
109 „Der Spiegel", 26 Juni 1967, № 27, էջ 64.
110 *И. Беляев, Е. Примаков.* Израильская агрессия и арабский мир.—«Международная жизнь», 1968, № 3, էջ 57; «Проблемы мира и социализма», 1968, № 4, էջ 76:
111 *Е. Примаков.* Пожинают бурю.—«Правда», 18.06.1967.
112 ١٩٦٧/٩/٦ ،"الاهرام"،
113 „Die Welt", 1.09.1967.
114 „General-Anzeiger", 1.09.1967.
115 „Frankfurter Rundschau", 31.08.1967.
116 ١٩٦٧/١٠/١٨ ،دمشق ،"البعث"،
117 *Արդեն իսկ հունիսի 5-ին արաբական երկրները համաձայնության եկան դադարեցնել նավթի արտահանումը ԱՄՆ, Անգլիա և ԳՖՀ, քանի որ այդ երկրներն աջակցում էին Իսրայելի ագրեսիվ գործողություններին։ Տես* „Международный ежегодник", 1967, „Политика и экономика". М., 1968, էջ 206.
118 ١٩٦٧/٧/٢٥ ،"الثوره"،
119 „Neues Deutschland", 7.06.1967.
120 Bulletin. 23.06.1967, № 66, էջ 566—567; 7.07.1967, № 72, էջ 624; 1.08.1967, էջ 694.
121 UNO Dok. a/6737—30.06.1967; Bulletin, 5.07.1967, № 71, էջ 609.
122 «Международная жизнь», 1968, № 2, էջ 119:
123 „Der Spiegel", 25. Dezember 1967, № 53, էջ 70.
124 *Willy Brandt.* Begegnungen und Einsichten. Die Jahre 1960—1975. Hoffman und Campe Verlag, Hamburg, 1976, էջ 589.
125 Bulletin, 3.11.1967; № 124, էջ 1055. *Այդ գումարից բացի 1968—1969 թթ. ԳՖՀ-ն, ՄԱԿ-ի շրջանակներում «Մերձավոր Արևելքի գաղթականներին» ուղարկեց 20,9 միլիոն մարկ։ Տես՝* Die Bundesrepublik Deutschland—Mitglied der Vereinten Nationen. Eine Dokumentation. Bonn, 1977, էջ 254.

126 Bulletin. 21.02.1968, ئ 186.
127 „Middle East Economik Digest", 1970, № 2, ئ 29.
128 „The New York Times", 17.07.1968.
129 „Neues Deutschland", 1.02.1968.
130 „Frankfurter Rundschau", 31.01.1968.
131 Bulletin, 1.07.1967, № 72, ئ 623.
132 „Außenpolitik", 11/ November 1969, ئ 649.
133 ١٩٦٩/٩/١١ ،"الشعب".
134 Verhandlungen des Deutschen Bundestages. Bd. 71, Bonn, 1969/1970, ئ 30—32.
135 *Willy Brandt.* Der Wille zum Frieden. Perspektiven der Politik. Hoffmann und Campe Verlag, Hamburg, 1971, ئ 269.